

Ժողովրդական ԳԱՏԱՎՈՐ  
Յ Ե Վ,  
Ժողովրդական ԱՏԵՆԱԿԱԼԻ  
Գ Ի Ս Դ Ա Ր Ա Ն

Բ. ՅԱ. ԱՐՈՆՆՅԵՎ

ԳԱՏԱԿԱՆ ՆԻՄՏ  
ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ

Ի. Տ. ԳՈՒՅԱԳՈՎՐ  
ԿՔՐՈՎՐՈՒԹՅԱՄԸ

343.1  
—  
Ա-93

MAR 2010

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ. ԽՈՒՄԻՆԻՍՏԱՆ ԱՐԴՅՈՂԿՐՄԱՏ

343.1

93 թՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՐԻ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ  
ԱՏԵՆԱԿԱԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Բ. ՅԱ. ԱՐՍԵՆՅԵՎ

ԻԱՏԱԿԱՆ ՆԻՍՏ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ

Ի. Տ. ԳՈԼՅՈՎՈՎԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՒՄԻՆԻՍՏ  
ՅԵՐԵՎԱՆ ● 1940

Վերջին ժամանակները դատական որդանները համարվել են ժողովրդական դատավորների և ժողովրդական ատենակալների նոր կազմերով, վորոնք ղեկավար բավարար չափով ծանոթ չեն խորհրդային որենսդրությանն ու չունեն դատական աշխատանքի անհրաժեշտ փորձ: Այդ ընկերներին ոգնութուն է պետք, վորպեսզի նրանք արագ կերպով կարողանան տիրապետել դործին, ընդդրկին դատական աշխատանքի հիմնական հարցերը, կողմնորոշվեն դատարանի առաջ դրված խնդրներում:

«ժողովրդական դատավորի և ժողովրդական ատենակալի զբաղարանի» լույսընծայումը զգալի չափով կլրացնի արդարագատություն մարմինների իրավարանական հանրամատչելի զբաղանություն բացը և ելական ոժանդակություն ցույց կտա ժողովրդական դատավորի և ժողովրդական ատենակալին՝ նրանց դործնական աշխատանքում:

Գրադարանը բաղկացած է քրեական և քաղաքացիական իրավունքի, դատական իրավունքի առանձին հարցերին և ժողովրդական դատարանի աշխատանքների այլ առանձին հարցերին նվիրված մի շարք զրքերից:

Իրավարանական հրատարակչությունը խնդրում է ընթերցողներին իրենց կարծիքն ու դիտողությունները լույս ընծայող զբաղարանի վերաբերյալ ուղարկել հրատարակչությանը:

БИБЛИОТЕКА  
Академії Наук  
УРСР

4762 KH



7992-53

ԳՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՅԵՎ ՊՐՈՑԵՍՈՒԱԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Քրեական գործերով դատական նիստը խոչոր քաղաքական և պրոցեսուալ նշանակություն ունի: Պրոցեսիայի ստագիայում դատարանը վերջնականապես լուծում է գործը, նա ստուգում է գործով հավաքված բոլոր ապացույցները, ուսումնասիրում է նախաքննություն բոլոր նյութերը և իր վերջնական վճիռն է կայացնում այն կարևորագույն հարցեր առթիվ, թե արդյոք մեղավոր է կամ անմեղ այն քաղաքացին, վորը դատի յե տրված: Բացի այդ, դատարանը պետք է լուծի և մի այլ, վոչ պակաս կարևոր հարց՝ ինչպիսի պատժի պետք է յենթարկվի մեղադրյալն այն դեպքում, յեթե նա մեղավոր ճանաչվի:

Մինչև դատական նիստը մեղադրյալի այն գործողությունների մասին, վորոնք քննության առարկա յեն յեղել, տեղյակ են լինում մի քանի հոգի—դատախազը, քննիչը, մեղադրյալն ինքը և այն վկաները, վորոնք գործով հարցաքննվել են: Իսկ դատական նիստում քրեական գործը դուրս է դալիս քննիչի կամերայի սահմաններից, նա հայանի յե դառնում մարդկանց լայն շրջաններին, գործը հասարակական նշանակություն է ձեռք բերում: Դատարանում, աշխատավորների ներկայությամբ սյարդվում է մեղադրյալի գործողությունների սոցիալական վտանգավորությունը, կոնկրետ կերպով ցույց է տրվում այն վնասը, վոր մեղադրյալն իր գործողություններով հասցրել է առանձին անհատների կամ հասարակական և պետական կազմակերպությունների: Դատական նիստում մեղադրյալի հանցավոր գործողություն—

ները բացահայտելը բարձրացնում է լայն մասսաների գգոնութեան գգացմունքը, դաստիարակչական ազդեցութիւնն է գործում մասսաների վրա, քանի վոր նրանք տեսնում են, թե վորքան վնասակար են այդ գործողութիւնները մեր սոցիալիստական շինարարութեան համար, ինչպես են նրանք խախտում սահմանված իրավակարգը, սոցիալիստական կեցութեան կանոնները: Այսպէս ստեղծվում են այն անհրաժեշտ պայմանները, վորոնք նպաստում են հանցագործութիւնները դեմ պայքարելուն՝ աշխատավորները սովորում են զնահատել և հարգել այն իրավակարգը, վորը սահմանել է ստական իշխանութիւնը:

Այստեղից էլ բղխում է մասսաների դաստիարակումը՝ հարգելու խորհրդային որենքները, ճանաչելու դրանց անխախտութիւնը, անձեռնմխելիութիւնն ու դրանք խտորեն պահպանելու և կատարելու անհրաժեշտութիւնը:

Դաստարանը պատիժ է սահմանում մեղադրյալի համար: Յեթե այդ պատիժն արդարացի է և համապատասխանում է մեղադրյալի կատարած արարքին, նա լայն մասսաներում առաջ է բերում բավարարութիւն և հարգանք դեպի այն որդանները, վորոնք պայքարում են հանցագործութիւնների դեմ: Մասսաները տեսնում են, թե ինչպիսի խորամանկութիւնների դիմաց մեղադրյալը, ինչպիսի միջոցներ ձեռք առաւ, վորպեսզի խաբի պետական իշխանութեան որդաններին, այնուամենայնիվ նա մերկացւից, նրա բոլոր հանցագործութիւնները բացվեցին, նա կանգնեց պրոլետարական դատարանի առաջ և իր արժանի պատիժը կրեց: Դա դաստիարակում է մասսաների մեջ վստահութիւնն դեպի պետական իշխանութեան այն որդանները, վորոնց վստահած է ինչպես առանձին քաղաքացիների, նույնպես և ամբողջ պետութեան կյանքի, բարեկեցութեան պաշտպանութիւնը: Դա ուժեղացնում է մասսաների մեջ զգոնութիւնն ու նրանց ուշադրութեան լարվածութիւնը դեպի ժողովրդի թշնամիները, ամեն տեսակի հանցագործները և սոցիալիստական իրավակարգը խախտողները. դաստիարակում է այն զիտակցութիւնը, թե անհրաժեշտ է ոգնել քննչական որդաններին հանցագործութիւններ և հանցագործներ հայտարարելու նրանց պատասխանատու աշխատանքում:

Դասական նիստը տեղի է ունենում վորոշ, որենքով սահմանված ձևերով, վորոնք յերաշխալորում են ճշմարտութեան հաջող և ամենից ճիշտ հայտարարումը: Այդ ձևերը պաշտպանում են մեղադրյալի իրավունքները, վորին դատարանը լսում է և վորին դատարանը հնարավորութիւն է տալիս ներկայացնելու իր պաշտպանութեան համար անհրաժեշտ բոլոր նյութերն ու բացատրութիւնները:

Հետևապէս, ավելի ևս բարձրանում է դատական նիստի նշանակութիւնը, քանի վոր նա դաստիարակում է աշխատավորների մեջ գգայուն և ուշադիր վերաբերմունք դեպի մարդը, թեև այդ մարդը նստած է մեղադրյալների ակօռի վրա:

Քրեական գործերի դատական քննութեան խոշոր դաստիարակչական նշանակութիւնը հաճախակի ընդդէմ են մեր ուսուցիչները: Լենինը մի շարք անգամներ մատնանշել է, վոր անհրաժեշտ է գործերը քննութեան դնել, վորպեսզի այդտեղ սրվի ուշադրութիւնը, մորելիքացիայի յենթարկի հասարակութիւնը և արմատախիլ արվեն այս կամ այն բացասական յերևույթները կյանքում: Որինակ, հայտնի է Լենինի 1921 թ. սեպտեմբերի 3-ի նամակն ուղղված արդժողկոմ Կուրսկուն, վորտեղ նա պահանջել է դատական քննութեան դնել մի քանի գործեր քաղքուկի մասին, հասնել այն բանին, վոր նախատվեն մեղավորները նաև մամուլում և խիստ պատժի յենթարկվեն, ընտրելով ավելի վառ որինակներ և յուրաքանչյուր դատ դարձնել քաղաքական գործ (տե՛ս Լենին, հ. XXIX, էջ 403):

Լենինի այս ցուցումը լիակատար կերպով համապատասխանում է այն նշանակութեանը, վոր նա տալիս էր մեր դատարանին, վորպէս մի որդանի, վորը դաստիարակում է լայն մասսաներին, վորպէս մի որդանի, վորտեղ այդ մասսաներն անցնում են պետական կառավարման շկուր:

Ընկեր Ստալինը հաճախակի ընդգծում է դատարանի խոշոր նշանակութիւնը, ամեն կերպ պահանջելով խորհրդային որենքների կայունութիւնն և մատնացույց անելով, վոր այդ որենքները կատարելը խորհրդային յուրաքանչյուր քաղաքացու սրբազան պարտականութիւնն է:

Այն բացառիկ կարևոր քաղաքական նշանակութիւնը,

վոր ընկեր Ստալինը տալիս է խորհրդային դատարանին, ամբացված է Ստալինյան մեծ Սահմանադրութեան մեջ, վորտեղ դատարանը բարձրացված է աննախընթաց բարձրութեան, վորտեղ դատաւորները հայտարարված են անկախ և միմիայն որենքին յենթակա, վորտեղ շարադրված են մեր դատարանակազմութեան այն անասան հիմունքները, վորտեղ մարդկութեան պատմութեան մեջ առաջին անգամ դարձնում են մեր դատարանն իսկապես ժողովրդական և իսկական ուսել հնարավորութեան են տալիս նրան նպաստելու լայն մասսաների հասարակական-քաղաքական դաստիարակմանը:

Դատարանի այդ կարևորագույն խնդիրն իր արտահայտութեանն է գտել նաև ԽՍՀՄ, միութենական և ամբողջ հանրապետութեանները դատարանակազմութեան որենքում, վորի 3-րդ հոդ. մենք կարդում ենք.

«Սորհրդային դատարանը, կերտելով քրեական պատժի միջոցներ, վոչ միայն պատժում է հանցագործներին, այլև իրեն նպատակ է դնում ուղղել և վերադաստիարակել հանցագործներին:

Իր ամբողջ գործունեությունում դատարանը ԽՍՀՄ քաղաքացիներին դաստիարակում է հայրենիքին և սոցիալիզմի գործին նվիրվածության վրդով, խորհրդային որենքների ճշգրիտ և անշեղ կատարման վրդով, սոցիալիստական սեփականութեանը խնամքով վերաբերվելու, աշխատանքային կարգապահութեան, պետական ու հասարակական պարտքին սպասարկելու, պետական հանրակեցութեան կանոնները հարգելու վրդով»:

Բացի իր քաղաքական նշանակությունից քրեական գործով դատական նիստն ունի նաև խոշոր պրոցեսուալ նշանակություն:

Նախաքննութեան ժամանակ հավաքվում է այն նյութը, վորն անհրաժեշտ է և բավական նրա համար միայն, վորպեսզի մեղադրյալը դատի տրվի: Վերջնական խոսքը հանցավորութեան մասին դատարանին է պատկանում: Դատական նիստում նա ստուգում և լրացնում է հավաքված նյութերը: Այդ անում է վոչ թե մեկ հոգի, այլ դատաւորների կոլեգիան, վորը բաղկացած է յերեք հոգուց, վորոնցից

յերկուսը ժողովրդական ատենակալներ: Դատաւորները, համեմատելով գործի հանգամանքներն իրենց ամբողջութեամբ, գնահատում են հավաքված նյութերն իրենց ներքին համոզմունքով, վորը հիմնված է սոցիալիստական իրավագիտակցութեան վրա, նրանք ստուգում են քննչական որդանների բոլոր գործողութեանները, և այդ որդանների թույլ տված՝ որենքների ամենափոքր խախտումը հայտարարելով է մանրակրկիտ ստուգմամբ, վորը կատարում է դատարանը: Դա հարկադրում է քննչական որդաններին հատկապես զգուշ մտանալ մեղադրյալի որինական իրավունքներին, հաստատապես յուրացնել այն դրույթը, վոր պրոցեսուալ որենքները սոսկ ատենակալական կանոններ չեն, վորոնք կարելի չէ պահպանել «այն չափով, վոր չափով», այլ վոր այդ որենքներն անհրաժեշտ պայմաններ են, վորոնք ապահովում են սոցիալիստական արդարագատութեան ճիշտ վարումը:

Քննչական որդանների կողմից թույլ տրված՝ պրոցեսուալ որենքների յուրաքանչյուր թերագնահատում կամ անչորհքութեան դրանց պահպանման մեջ կանոնադաշտ քննութեան լրիվ լինելու վրա, յերևան կգա դատական նիստում և կարող է անհնար դարձնել գործի լուծումը:

Քննչական որդանների համար կարևոր և պարտադիր պրոցեսուալ որենքները հատուկ նշանակություն են ձեռք բերում դատական քննութեան ժամանակ, քանի վոր նրանք սգնում են դատարանին լավագույն կերպով լուծել գործը: Պրոցեսուալ որենքների այս կամ այն խախտումը դատարանի կողմից չի կարող չանդրադառնալ դատավճուի ճշտութեան վրա և չի կարող նրա բեկանումն առաջ չբերել յերկրորդ ատյանի դատարանի կողմից: Դրանով ընկնում է գործը քննող դատարանի հեղինակությունն ու դատական պրոցեսի քաղաքական նշանակությունը:

Այսպիսով, դատական նիստի քաղաքական և պրոցեսուալ նշանակությունն իրարից անբաժանելի յեն: Քրեական գործով դատական նիստը քաղաքական նշանակություն է ձեռք բերում, յեթե դատարանը պահպանում է պրոցեսուալ որենքները. պրոցեսուալ որենքները ճշտորեն պահպանված կլինեն, յեթե դատարանը վոչ մի բնական աչքաթող չանի

քրեական գործի դատական քննութեան քաղաքական կարևորութիւնը:

Վորպեսզի քրեական գործի դատական քննութիւնը կարողանա կատարել վերոհիշյալ խնդիրը, այն կառուցվում է վորոշ սկզբունքներով:

Գ Լ Ո Ւ Խ II

ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՁԲՈՒՆՔՆԵՐ, ՎՈՐՈՆՅՈՎ ԿԱՌՈՒՅՎՈՒՄ Ե ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԸ

Այդ սկզբունքները հետևյալներն են՝ հրապարակայնութիւն, բանավորութիւն և անմիջականութիւն, անընդհատութիւն, մրցողականութիւն, և կողմերի իրավահավասարութիւն, մեղադրյալի պաշտպանութեան իրավունքը և մեղադրյալի՝ դատարանում հանդէս գալու և գործի նյութերին իր մայրենի լեզվով ծանոթանալու իրավունքն ապահովելը:

Քննենք այդ սկզբունքներից յուրաքանչյուրը:

1. ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Հրապարակայնութիւն ասելով հասկացվում է դատական նիստի այնպիսի կազմակերպումը, յերբ դատարանի բոլոր գործողութիւնները, բացի դատավճիռ կայացնելուց, տեղի յեն ունենում բացահայտորեն, հրապարակով: Յուրաքանչյուր ցանկացող կարող է ներկա լինել դատին. մասնաւոր կարող է հաշվեալութիւն տալ դատական նիստի մասին, չստանալով դրա համար նախազանգի թույլտվութիւնը:

Բուրժուական պրոցեսը տարբերում է հրապարակայնութեան յերկու տեսակը՝ հրապարակայնութիւն մեղադրյալի համար և հրապարակայնութիւն հասարակութեան համար: Այդ նշանակում է, վոր կարող են լինել դեպքեր, յերբ գործը լավում է դոնիսկ նույնիսկ մեղադրյալի համար, այսինքն՝ նրա բացակայութեամբ: Այդպիսի սկզբունքը միանգամայն ոտար և անընդունելի յէ խորհրդային պրոցեսի համար: Մեզ մոտ չկա և չի կարող լինել այնպիսի դրութիւն, վոր գործը քննվի մեղադրյալի բացակայութեամբ: Ճիշտ է, մեր որենքը գիտի այնպիսի դեպքեր,

յերբ մեղադրյալը կարող է ներկա չլինել իր գործի քննութեան ժամանակ, սակայն այդ դեպքերը հազվագյուտ բացառութիւններ են կազմում, վորոնց մասին կխոսվի ստորև: Խոսելով հրապարակայնութեան մասին, մենք նկատի ունենք գործի դոնրաց քննութիւնը հասարակութեան համար, քանի վոր մեղադրյալի ներկա լինելն իր գործի քննութեան ժամանակ պարտադիր է և ինքնին յենթադրվում է:

Մեր քրեական պրոցեսում, խորհրդային դատարաններին կազմակերպման առաջին խիստ որից, դատական նիստերի հրապարակայնութիւնը հայտարարվել է վորպէս հիմնական կանոն, վորի խախտումը միշտ էլ դիտվել է վորպէս հեղափոխական որինականութեան կոպիտ խեղաթյուրում: ԽՍՀՄ և միութենական հանրապետութիւնների դատարանակազմութեան 1924 թ. հիմունքների 14-րդ հոդվածն այդ սկզբունքը դարձրել է պարտադիր բոլոր այն դատարանների համար, վորոնք գործում են մեր Միութեան տերիտորիայի վրա, և վորեւէ տեղական որենադրութիւններ չէյին կարող փոփոխել համամիութենական այդ որենքը:

Մեր դատական նիստի այդպիսի կազմակերպումը միանգամայն հասկանալի յէ և լրիվ համապատասխանում է այն խնդիրներին, վորոնք դրված են խորհրդային դատարանի առաջ: Իրականացնել իր հսկայական դատարակազմական դերը խորհրդային դատարանը կարող է այն բանի շնորհիվ միայն, վոր քրեական գործերի քննութիւնը տեղի յէ ունենում լայն մասսաների աչքի առջև:

Ահա թէ ինչու Ստալինյան մեծ Սահմանադրութիւնը պրոցեսուալ այդ որենքը դարձրել է սահմանադրական որենք, սահմանելով 111-րդ հոդ. վոր «գործերի քննութիւնը ԽՍՀՄ բոլոր դատարաններում, վորչափով որենքը բացառութիւններ չի նախատեսում, կատարվում է դոնրաց»: Սահմանադրութեան այդ պահանջը հիմք է ծառայել ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի II նստաշրջանում ընդունված՝ ԽՍՀՄ, միութենական և ալտոնում հանրապետութիւնների դատարանակազմութեան որենքի 8-րդ հոդ. համար:

Այսպիսով անհրաժեշտ է յուրացնել հետևյալ կանոնները.

1) բոլոր քրեական գործերն անպայման ֆնկվում են մե-  
պադրյալի ներկայութեամբ,

2) բոլոր քրեական գործերը ֆնկվում են դռնբաց, վոր-  
չափով որեհնարում բացառութեամբ չեն նախատեսված—  
այդ նշանակում է, վոր այն գործերը միայն կարող են  
քննվել դռնփակ, վորոնց մասին հնարապետ հիշատակվում  
է որենքում:

Վորո՞նք են այդ գործերը:

ՌԻՖՍՉ Քր. Դատ. Որ. 19-րդ հոդ.<sup>1</sup> և միութենական  
հանրապետութեան Քր. Դատ. Որ. համապատասխան  
հոդ. հոդ. տալիս են այդ հարցի սպառնչ պատասխանը:  
Այն դեպքերը, յերբ կարելի չէ գործը քննել դռնփակ, ճըշ-  
տորեն ցույց է տրված որենքում: Դա, նախ, այն գործերն  
են, վորոնցով անհրաժեշտ է պահպանել սպառնալից, զիվա-  
նազիրտական կամ պետական զազանիքը և, ապա, սեռական  
հանցագործութեան վերաբերյալ գործերը: Դատարանն  
այս դեպքում պարտավոր է պատճառաբանված վորոշում  
կայացնել ճշտորեն ցույց տալով, թե ինչ հիմունքներով  
է նա անհրաժեշտ համարում գործը դռնփակ քննելու: Ընդ-  
վորում, դատարանն իրավունք ունի հայտարարել դատական  
նիստը դռնփակ գործի ամբողջ քննութեան ընթացքում կամ  
առանձին դատական գործողութեանն անցկացնելու ժա-  
մանակ: Բայց անգամ այն դեպքերում, յերբ գործը քննվում  
է դռնփակ, դատավճիռը հայտարարվում է հրապարակորեն:  
Բացի այդ բացառութեաններէ, պետք է նկատի ունենալ,  
վոր մինչև 14 տարեկան հասակ ունեցող յերեխաները, յե-  
թե նրանք գործով մեղադրյալներ, տուժողներ կամ վկա-  
ներ են հանդիսանում, դատական նիստի դահլիճում ներկա  
գտնվել չեն կարող: Այդ արդեւքի պատճառները հասկանա-  
լի չեն և պարզաբանման կարող չեն: Այսպիսով, մենք  
տեսնում ենք, վոր գործի քննութեան հրապարակայնութեան  
ընդ մեր քրեական պրոցեսում անց է կացված շատ լայն, շե-  
ղումները հնարավոր են բացառիկ դեպքերում միայն և  
պետք է մանրամասն կերպով հիմնավորված լինեն:

Դատական նիստի յերկրորդ սկզբունքը հանդիսանում  
էն՝

<sup>1</sup> Տես հավելվածում հոդվածների համեմատական տախտակը:

Այդ սկզբունքների էությունը կայանում է հետևյա-  
լում: Դատարանը չպետք է բավարարվի այն ապացույցնե-  
րով, վոր հավաքված են նախաքննութեան ժամանակ: Նա  
պարտավոր է ինքնուրույն կերպով ստուգել և գնահատել  
այդ ապացույցները: Վկաներն արդեն հարցաքննված են  
քննիչի կողմից. նրանց ցուցմունքները շարադրված են ար-  
ձանագրութեան մեջ. իրեղեն ապացույցները գննված են  
նախաքննութեան ժամանակ և մանրամասն նկարագրված  
արձանագրութեան մեջ: Փորձագետը տվել է իր յեղրակա-  
ցութեանը գրավոր:

Արդյոք բավակա՞ն են այս տվյալները: Դրանք ազա-  
տում են դատարանին արդյոք վկաներին մեկ անգամ ևս  
հարցաքննելու, իրեղեն ապացույցները գննելու և փորձա-  
գետներին լսելու անհրաժեշտութեանից: Վոչ, չեն ազա-  
տում, քանի վոր նման վոչ-քննադատական վերաբերմունքը  
դեպի նախաքննութեան ժամանակ հավաքված ապացույցնե-  
րը դատարանին դարձնում է մի պատիվ որդան, մատնում  
է նրան կուրորեն մտահանելու նախաքննութեան նյութերին:  
Մինչդեռ, որենքը պահանջում է, վորպետք է դատարանն իր  
դատավճիռը հիմնի գործում յեղած և նոր հավաքված ու  
դատական նիստում քննված տվյալների վրա: Դատավորը  
պետք է իր աչքերով տեսնի վկային և փորձագետին, իր  
ականջներով լսի նրանց բացատրութեանները, իր ձեռքերով  
չոչափի գործում յեղած իրեղեն ապացույցները: Այդ դեպ-  
քում միայն գործի բոլոր ապացույցները յերեան են դալիս  
իրենց ամբողջ պարզորոշութեամբ, ուժով և նշանակու-  
թեամբ և հնարավորութեան են տալիս դատավորնե-  
րին կազմելու նրանց մասին այն ճիշտ կարծիքը,  
վորն անհրաժեշտ է դատավճիռ կայացնելու համար:  
Այստեղից բխում է որենքի հիմնական պահանջը՝  
բոլոր ապացույցները պետք է ստուգել բանավոր կերպով,  
հրապարակելով վկաների՝ նախաֆնկութեան ժամանակ  
տված ցուցմունքները, բացառիկ դեպքերում միայն, այն է՝  
յերբ անհրաժեշտ է պարզել վկայի դատական նիստում և  
նախաֆնկութեան ժամանակ տված ցուցմունքների միջև յե-

դած հակասութիւնը կամ վկայի՝ դատական նիստից հարգելի պատմառով բացակայելու դեպքում:

Այն, ինչ վոր ասվել է վկաների ցուցմունքներէ մասին, վերաբերում է և բոլոր ապացույցներին: Պետք է ձգտել դատական նիստը վարել գլխավորապես բանավոր ցուցմունքներէ հիման վրա: Այս կանոնը կարևոր է նրա համար, վոր, նախ, գործը նման ձևով վարելու դեպքում մեղադրյալը հնարավորութիւն է ստանում ակտիվ մասնակցել գործի բոլոր հանգամանքներէ ստուգմանը և, ապա, նրա համար, վոր գործ լսողները կարող են քննադատորեն վերաբերվել գործի բոլոր ապացույցներին և գիտակցորեն ստուգել, թե արդյոք ճիշտ է արժեքավորում դատարանն այդ ապացույցները: Դրա հետեանքով էլ դատարանի դատավճիռն առավել չարիով համոզեցուցիչ է դառնում. դատարանի և հասարակայնութեան միջև ստեղծվում է այն սերտ կապը, վորն այնքան կարևոր է մեր դատավորներէ համար, վորոնք ընտրվում են ժողովրդի կողմից և ժողովրդի շահերի համար վարում են արդարադատութեանը:

Այդ սկզբունքի հետ սերտ կապված է հետևյալը.

3. ՊՐՈՅՆՍԻ ԱՆԸՆԴՆԱՏՈՒԹՅՈՒՆԸ  
(Ռեֆսուզ Գր. Գատ. Որ. 258 հոդ.)

Անմիջականութեան սկզբունքը պահանջում է, վորպեսզի յուրաքանչյուր քրեական գործ քննութեան առնվի անընդհատ:

Չի կարող այնպիսի դրութիւն լինել, վոր գործն սկսվի, քննութեան առնվի վորոշ ժամանակ, ապա հետո՝ ձգվի մեկ-յերկու օրով և հետո նորից շարունակվի սկսած այն տեղից, վորտեղ դատարանը կանգ է առել մինչև ընդմիջումը: Չի կարող նաև այնպիսի դրութիւն լինել, վոր նույն նիստում հարցաքննվեն գործով մի քանի վկաներ, զինվեն իրեղևն ապացույցները և ապա գործը հետաձգվի անորոշ ժամանակով և մեկ անգամ արդեն հարցաքննված վկաներն այլևս չհարցաքննվեն:

Անթույլատրելի յե և այն դեպքը, յերբ գործի քննութեան ընդհատվում է վորևէ պատճառով և դատարանն

ընդմիջման ժամանակ քննում է մի այլ գործ և ապա վերադառնում ընդհատված գործին:

Դժվար չէ հասկանալ, վոր այս բոլոր դեպքերում ամենաօրինակ կերպով խախտվում է անմիջականութեան սկզբունքը, քանի վոր դատավորը հնարավորութեան չի ունենում կազմել միասնական, ամբողջական ու լիակատար տպավորութեան գործով հավաքված ապացույցներէ մասին: Անխառնելի յե նաև այն, վոր մեր նշած դեպքերում այդ ապացույցները մոռացվում են, խառնվում են այլ ապացույցներէ և դատավորները գործի մասին պարզ պատկերացում չեն ստանում: Նմանապես անթույլատրելի յե և այն կարգը, յերբ գործի քննութեան ժամանակ մի դատավոր փոխարինվում է ուրիշ դատավորով:

Վորպես օրինակ բերենք հետևյալ դեպքը: Գրեական գործն սկսվել է ժողովրդական դատավորի և յերկու ժողովրդական ատենակալների կազմով: Գործի քննութեան ժամանակ դատավորներից մեկը հիվանդացել է: Ինչպէ՞ս պետք է վարվել գործի հետ: Չի՞ կարելի արդյոք հրավիրել ուրիշ ատենակալ, յեթէ հիվանդացել է ատենակալը, կամ ուրիշ դատավոր, յեթէ հիվանդացել է նախագահողը, և գործը շարունակել այն տեղից, վորտեղ ընդհատված է յեղել: Վոչ, չի կարելի: Այն նոր դատավորը, վորը մտնում է գործի մեջ, անմիջականորեն չի մասնակցի այն բոլոր ապացույցներէ ստուգմանը, վորոնք քննվել են նրանից առաջ: Նա, իհարկէ, կարող է ծանոթանալ այդ բոլոր տվյալներին դատական նիստի արձանագրութեանից, նրան կարող են գործին տեղյակ դարձնել մյուս դատավորները, սակայն գրանով կոպիտ կերպով կխախտվի անմիջականութեան սկզբունքը: Մեջ բերված դեպքում պետք է վարվել հետևյալ կերպ. գործը նոր կազմով քննութեան առնել սկզբից նրա համար, վորպեսզի գործին մասնակցող դատավորն ինքն անձամբ մասնակցի գործի բոլոր հանգամանքներէ ստուգմանը: Դրա համար էլ հանձնարարվում է բարդ գործերում, վորոնց քննութեանը տևում է մի քանի օր, ունենալ դատարանի կազմում պահեստի ատենակալներ: Նրանք փոխարինում են հիվանդութեան պատճառով դուրս մնացող դատավորներին և քանի վոր նրանք ներկա յեն լի-

նում գործի քննութեան ամբողջ ընթացքում, ուստի դատա-  
վորներից վորեւե մեկի դուրս դալը դատական կազմից չի  
հարկադրում գործը վերսկսելու սկզբից:

Յեղնելով այդ սկզբունքից, խստիվ արդելվում են և  
այնպիսի դեպքեր, վորոնք յերբեմն տեղի յեն ունենում  
դատական պրակտիկայում. դատարանը քննում է մի քանի  
գործ, նրանցից յուրաքանչյուրի վերաբերմամբ չի կայաց-  
նում դատավճիռ, իսկ ամբողջ դատական նիստը վերջա-  
նալուց հետո անցնում է խորհրդակցական սենյակ և կազ-  
մում դատավճիռներ իր քննած բոլոր գործերով: Դժվար չե  
տեսնել, թե ինչպիսի վնաս է հասցնում անընդհատութեան  
սկզբունքի խախտումը: Յուրաքանչյուր գործով առանձնա-  
պես դատավորները քննում են ապացույցները վոչ անմի-  
ջապես. նրանց թարմ տպավորութեանները գործից թուլա-  
նում են, խառնվելով այլ գործից ստացված նոր տպավո-  
րութեաններին. այն բնորոշ առանձնահատկութեանները,  
վորոնցից մասամբ կախված է մեղավորութեան կամ պատ-  
ժամիջոցի վերաբերյալ հարցի լուծումը, անհետանում են.  
դատավճիռ կայացնելիս դատավորը պարզ պատկերացում  
չի ունենում մեղադրյալի ինքնութեան, հարցաքննված վկա-  
ների մասին: Դատարանը մոլորված է խախտի մեջ, նրա  
տոջն կենդանի մարդկանց փոխարեն անցնում են ազոտ  
ստվերներ. . Ահա թե ինչու ՌԽՖՍՀ Քր. Դատ. Որ. 258 հոդ.  
և մյուս միութենական հանրապետութեանների Քր. Դատ.  
Որ. համապատասխան հոդվածներում մենք գտնում ենք հե-  
տևյալ կատեգորիկ պահանջը. «դատական նիստը յուրաքան-  
չյուր գործով պետք է տեղի ունենա անընդհատ, բացի այն  
ժամանակից, վորը նշանակված է հանգստանալու համար:  
Սկսված գործի քննութեանն ավարտելուց առաջ ընդմիջման  
ժամանակ ուրիշ գործեր քննելը չի թույլատրվում»:

4. ՄՐՅՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱՆԱԿԱՍՍՐՈՒԹՅՈՒՆԸ  
(ՌԽՖՍՀ Քր. Դատ. Որ. 272, 273, 277, 278 հոդ. հոդ.)

Այդ սկզբունքների տակ հասկացվում է պրոցեսի այն-  
պիսի կազմակերպում, յերբ յերկու իրավահավասար կող-  
մեր՝ մեղադրյալն ու մեղադրողը՝ նույնպիսի իրավունքներ  
են վայելում դատաքննութեան ամբողջ ընթացքում: Այդ

իրավունքներն են՝ 1) կողմերից յուրաքանչյուրը կարող է  
ցույց տալ գործի քննութեան այն կարգը, վորը նա իր հա-  
մար ավելի հարմար և նպատակահարմար է համարում.  
2) կողմերից յուրաքանչյուրը կարող է ամեն տեսակի միջ-  
նորութեաններ հարուցել ու բացարկներ հայտնել դատավոր-  
ներին և քարտուղարին դեմ. 3) ներկայացնել այս կամ այն  
ապացույցները, վորոնք, իր կարծիքով, կարևոր նշանակու-  
թյուն ունեն վորոչ գրութեաններ ապացուցելու համար.  
4) յուրաքանչյուր կողմ ակտիվ կերպով մասնակցում է  
յուրաքանչյուր առանձին ապացույց քննելու ժամանակ.  
5) յուրաքանչյուր կողմ իրավունք ունի ամեն մի ապա-  
ցույցի առթիվ հայտնելու իր նկատառումները և 6) քննու-  
թյունն ավարտվելուց հետո մասնակցելու վիճարանու-  
թյուններին:

Բոլոր միջնորդութեանները լուծում է դատարանը,  
նրանից է կախված՝ համաձայնվել կամ չհամաձայնվել դա-  
տաքննութեան ժամանակ ծաղած այս կամ այն հարցի առ-  
թիվ կողմի արտահայտած կարծիքին, բայց գործի վարույ-  
թի և ապացույցների ստուգմանը վերաբերող հարցի առ-  
թիվ դատարանը վոչ մի վիճիչ չի կարող կայացնել առանց  
կողմերի կարծիքը լսելու:

Կողմերը լայն նախաձեռնութեան իրավունք են վայելում  
գործի բոլոր հանգամանքները պարզելու ասպարեզում:  
Կողմերի այդ իրավունքների յուրաքանչյուր սահմանափա-  
կումը պրոցեսում դիտվում է վորպես հեղափոխական  
որինականութեան կոպիտ խախտում:

Կողմերի մրցողականութեանը լիակատար կերպով  
առաջին անգամ կիրառվում է գործի դատաքննութեան ժա-  
մանակ, քանի վոր նախաքննութեան ժամանակ և դատի  
տալու ստադիայում մեղադրյալին լայն իրավունքներ չեն  
տրվում: Դրանում է արտահայտվում գործի դատաքննու-  
թեան բնորոշ առանձնահատկութեաններից մեկը: Ծնորհիվ  
մրցողական սկզբունքին նա լցվում է կենդանի բովանդա-  
կութեամբ, յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի լու-  
սաբանման է յենթարկվում և առանձնապես հստակ ու պար-  
զորոշ բնույթ ստանում. կողմերի համառ պայքարը, վո-  
րոնք դատարանի առաջ յերբեմն հակադիր գնահատական

են տալիս հավաքված ապացույցներին, հնարավոր է դարձնում դատարանի համար՝ ավելի լավ ըմբռնել գործը, ճիշտ տեսակետ մշակել յուրաքանչյուր առանձին ապացույցի և բոլոր ապացույցների ուժի մասին և ապահովում է դատարանին այն միակողմանիությունից, վորի մեջ նա յերբեմն կարող է ընկնել:

Մրցողականության սկզբունքն այն ժամանակ միայն կարող է իր լիակատար արտահայտությունը գտնել պրոցեսում, յերբ յերկու կողմերը հավասար են, յերբ նրանց իրավունքները միատեսակ են:

Այնտեղ, վորտեղ չկա կողմերի իրավահավասարություն, խոսք անգամ չի կարող լինել մրցողականության իրագործման մասին: Այնտեղ մեղադրյալը դառնում է իրավագուրդ մի եյակ, վորին ծաղրում են քննչական և դատական օրգանները: Նրան մեղադրում են, բայց հնարավորություն չեն տալիս պաշտպանվելու: Նրան չեն հարցաքննում, այլ կտտում են, նրան չեն լսում, այլ ծեծում են: Մա յե մեղադրյալի դրուժյունը Փաշխտական պրոցեսում:

Մեր քրեական պրոցեսը կառուցված է սոցիալիստական լայն դեմոկրատիզմի հիմունքներով: Ուստի դատական նիստում մրցողականության սկզբունքն անց է կացված հետևողականորեն և ծավալուն կերպով, և կողմերը դատարանում վայելում են միանգամայն հավասար պրոցեսուալ իրավունքներ:

Մեր դատական աշխատողները պետք է հիշեն, վոր մրցողականության ու կողմերի իրավահավասարության սկզբունքը դատական նիստում պահպանելը հզորագույն գործիքներից մեկն է, վորի ունեւթյամբ դատարանն իրագործում է արդարադատությունը մեր յերկրում:

5. ՄԵՂԱԳՐՅԱԼԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆԻ ԱՊԱՀՈՎԵԼԸ (ԽՍՀՄ Սահմանադրության 111-րդ հոդ. և ԽՍՀՄ դատարանակազմության օրենքի 8-րդ հոդ.)

Մենք արդեն պարզեցինք, վոր քրեական գործով դատաքննությունը հիմնված է մեզ մոտ կողմերի իրավահավասարության վրա: Մեր պրոցեսուալ իրավունքն ավելի շեղուն է գնում և հատկապես նշում է մեղադրյալի պաշտ-

պանություն իրավունքը: Մեր պրոցեսուալ իրավունքի այդ դրուժյունն իր հատուկ արտահայտությունն է գտել Ստալինյան մեծ Սահմանադրության մեջ, վորը 111-րդ հոդվածում սահմանում է, վոր դատարանն ապահովում է մեղադրյալին պաշտպանության իրավունք:

«Պաշտպանություն» ասելով քրեական պրոցեսում հասկացվում է վոչ միայն մեղադրյալի պաշտպան ունենալու իրավունքը. մեղադրյալի պաշտպանության իրավունքն ապահովելը պետք է հասկանալ ավելի լայն: Պաշտպան ունենալու իրավունքը «մեղադրյալի պաշտպանության իրավունք ապահովել» հասկացողության մի մասն է կազմում միայն: Պաշտպանության ասելով պետք է հասկանալ այն բոլոր իրավունքները, վոր օրենքը տալիս է մեղադրյալին և վորոնք պետք է պաշտպանեն դատարանը, քննչական օրգաններն ու դատախազությունը անկախ այն հանգամանակից, թե արդյոք մեղադրյալը պաշտպան ունի, թե վոչ: Վորքան ավելի լայն են այն իրավունքները, վոր վայելում է քաղաքացին տվյալ պետության մեջ ընդհանրապես, այնքան ել ավելի լայն են նաև այն իրավունքները, վոր օրենքը վերապահում է մեղադրյալին: Անսահմանափակ միակետության պայմաններում, վորտեղ մարդը համարվում էր վոչ թե քաղաքացի, այլ «հպատակ» միայն, վորտեղ չէին գիտնում բարի հայեցողությունն ու կամայականությունն օրենք եր դարձված, այնտեղ մեղադրյալը պրոցեսի օրյեկտ եր միայն, նրան կտտում էյին, նրանից շորթում էյին խոստովանություն և բնական է, վոր այնտեղ մեղադրյալը վոչ մի իրավունք չէր վայելում: Բուրժուա-դեմոկրատական պետություններում, օրինակ Անգլիայում, Ֆրանսիայում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում, վորտեղ ձեականորեն բոլորը հավասար են օրենքի առջև, մեղադրյալն ստանում է կողմի իրավունք պրոցեսում, բայց այդ իրավունքը սահմանված է միմիայն խոսքերով, իսկ իրականում նա վեր է ամվում աշխատավորների համար մի դատարկ հնչյունի, մեղադրյալը դրվում է այնպիսի դրուժյան մեջ, վոր նա հնարավորություն չի ունենում իրագործելու այդ իրավունքը:

799562



Այն պրոցեսները, վոր տեղի յեն ունեցել բուրժուական դատարաններում, վորոնց մասին գրել են թերթերում, նույն այդ դրուժյան լրիվ պատկերն են տալիս: Վերհիշենք Սահկոյի և Վանցեաթի պրոցեսը, Թոմաս Մունիի պրոցեսը, և մենք պարզ պատկերացում կստանանք այն կեղծիքի մասին, վոր իրենցից ներկայացնում են մեղադրյալի իրավունքների յերաշխիքները բուրժուա-դեմոկրատական յերկրներում: Կախումը պետական կարգերի և մեղադրյալի՝ դատարանում ունեցած դրուժյան միջև առանձին ուժով արտահայտվում է Փաշխատական պետութուններում:

Պետական կարգերը Իտալիայում, Յապոնիայում և այլ Փաշխատական յերկրներում, ներկայացնելով իրենցից մի արյունալի տեղոր վողջ աշխատավոր բնակչության համար, կազմակերպում են նույնպիսի մերկացված տեղոր այն մեղադրյալների վերաբերմամբ, վորոնք ընկել են Փաշխատական դահիճների ձեռքը: Այնտեղ մեղադրյալին չեն լսում դատարանում, այլ կտտում են բանտերում, դատարան շատ քիչ դործեր են հասնում, իսկ այն դործերը, վոր հասնում են՝ քննվում են դռնփակ, առանց հասարակացության վերահսկողության, Փաշխատական կազմակերպութուններից հատկապես ջոկած «խտակահար» չինովնիկների միջոցով, առանց պաշտպանության, առանց մեղադրյալին դանդաղարկման իրավունք տալու, հաճախ առանց ապացույցներն ստուգելու, վոր պոլիցիան է պատրաստում: Այդպիսի «դատարաններում» մեղադրյալը մի անպաշտպան եյակ է հանդիսանում, վորի վրա Փաշխատական արդարադատության քրեական բանդաները կտտարում են իրենց դատաստանը:

Միակ մի յերկիր աշխարհում՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութունների Միությունը սահմանադրական որենք է դարձրել դատարանի պարտականությունը՝ ապահովելու մեղադրյալի պաշտպանության իրավունքը, անկախ այն բանից, թե արդյոք ունի նա պաշտպան, թե վոչ:

Դատարանի պարտականությունը մեղադրյալի պաշտպանության իրավունքն ապահովելու վերաբերմամբ հետևյալն է՝

1) Մեղադրյալը պետք է նախորդ ստանա մեղադրական յեղրակացությունը և իսկական հնարավորություն դործին ծանոթանալու համար. 2) մեղադրյալի համար պետք է նշանակել պաշտպան այն դեպքերում, յերբ մեղադրյալն այդ մասին խնդրել է և յերբ ինքը պաշտպան ընտրել չէ կարողացել. 3) մեղադրյալին դատական նիստում պետք է հնարավորություն տրվի օգտագործելու այն բոլոր իրավունքները, վոր նրան վերապահում է որենքը մրցողականության սկզբունքի ուժով. 4) մեղադրյալը պետք է հնարավորություն ստանա իր պաշտպանության համար ճառ արտասանելու, յեթե պաշտպան չունի և վերջին խոսք, անկախ այն բանից, թե արդյոք ունի նա պաշտպան, թե չունի. 5) մեղադրական դատավճիռ կայացնելուց հետո մեղադրյալին պետք է բացատրել դատավճիռը դանդաղարկելու նրա իրավունքը և դանդաղարկման համար սահմանված կարգը:

Որենքի այս պահանջների խտագույն պահպանումը դատավճռի ճշտության անհրաժեշտ պայմանն է հանդիսանում. այդ պայմանների խախտումն անպայման առիթներից մեկն է, վորոնց առկայությամբ դատավճիռը բեկանվում է:

Դատավորները պետք է լսվ յուրացնեն այն, վոր դործի դատաքննության այդ սկզբունքի խախտումը Ստալինյան մեծ Սահմանադրության խախտում է, սոցիալիստական արդարադատության հիմքերի խեղաթյուրում և սոցիալիստական որինականության խախտում:

Ժողովուրդների մեծ առաջնորդ ընկեր Ստալինի կողմ դեպի մարդը զգայուն և ուշադիր վերաբերմունք ունենալու մասին պետք է ամբողջովին թափանցի մեր քրեական պրոցեսն ընդհանրապես և դատական նիստը մասնավորապես: Մեղադրյալի պաշտպանության իրավունքն ապահովող բոլոր որենքների խտագույն պահպանումը հանդիսանում է առաջնորդի այդ կողի իրազործումը պրակտիկայում:

6. ՄԵՂԱԿՐՅԱԼԻՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՅԵՆՈՒՅՓ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՅՅՎ  
ԳՈՐԾԻ ՆՅՈՒԹԵՐԻՆ ԻՐ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎՈՎ ԾԱՆՈԹԱՆԱԼՈՒ  
ԻՐԱՎՈՒՆՔԻՆ ԱՊԱՀՈՎՅԼԸ

(ԽՍՀՄ Սահմանադրութեան 110 հոդ., ԽՍՀՄ դատարանակազմութեան  
որենքի 7 հոդ., ՌԽՖՍՀ Քր. Դատ. Որ. 241 հոդ.)

Մեղադրյալի պաշտպանութեան իրավունքի ապահովման  
հետ անմիջականորեն կապված է մի այլ, վոչ պակաս կա-  
րևոր, սկզբունք՝ մեղադրյալի դատարանում յելույթ ու-  
նենալու և իր մայրենի լեզվով գործի նյութերին ծանոթա-  
նալու իրավունքի ապահովումը: Միմիայն այդ սկզբունքը  
պահպանելու դեպքում մեղադրյալը կարող է ոգտագործել  
որենքով նրան վերապահված իրավունքները: Այլապես այդ  
իրավունքները նրա համար կդառնան մի դատարկ հնչյուն—  
դատարանում քննվում է նրա գործը, վկաները խոսում են  
նրա մասին, իսկ ինչ են ասում, ինչ է գրված այն բազմա-  
թիվ արձանագրութուններում, վորոնք կան գործում, մե-  
ղադրյալը չգիտի և չի հասկանում:

Լեռն-ստալինյան ազգային քաղաքականութեանը հա-  
մապատասխան Ստալինյան Սահմանադրութեան մեջ սահ-  
մանված է հետևյալ սկզբունքը՝ «դատավարութունը կա-  
տարվում է միութենական կամ ավտոնոմ հանրապետու-  
թեան կամ ավտոնոմ մարզի լեզվով, այդ լեզվին չտիրապե-  
տող անձերի համար ապահովելով լիակատար ծանոթացու-  
մը գործի նյութերին թարգմանի միջոցով, ինչպես նաև  
դատարանում մայրենի լեզվով հանդես գալու իրավունքը»:

Սահմանադրութեան այդ պահանջը խիստ կարևոր  
պարտականութուններ է դնում դատարանի վրա: Արդեն իսկ  
դատի տալու ստադիայում, պարզելով, վոր տվյալ մեղա-  
դրյալը չի տիրապետում այն լեզվին, վորով գործի դա-  
տավարութունը պետք է տեղի ունենա, դատարանը պար-  
տավոր է թարգման հրավիրել, հայտնել այդ մասին մե-  
ղադրյալին և բացատրել նրան, վոր նա կարող է թարգմա-  
նի միջոցով ծանոթանալ գործին: Մեղադրական յեղրակա-  
ցութունը պետք է հանձնել մեղադրյալին թարգմանված  
նրա մայրենի լեզվով. մեղադրյալն իրավունք ունի խնդրել  
դատարանին թարգմանելու իրեն հասկանալի լեզվով նա-  
խաքննութեան Ժամանակ արձանագրված այս կամ այն

ցուցմունքները: Այդպիսի միջնորդութունն անպայման  
պետք է բավարարվի և թարգմանչական ծախսերը դատա-  
րանը պետք է դարձնի գործի ընդհանուր դատական ծախ-  
սերի հաշվին: Մեղադրյալը պետք է ապահովված լինի  
թարգմանով նաև դատական նիստում: Գործի վարույթը  
պետք է անցկացնել մեղադրյալի համար այնպես, վորպես-  
դի նա իսկական հնարավորութուն ստանա ակտիվորեն  
գործին մասնակցելու: Դատավորները պետք է հատուկ  
ուշադրութեամբ վերաբերվեն այդ պրոցեսուալ մոմենտին,  
քանի վոր որենքի այդ պահանջի ամեն մի թերազնահատում,  
ամեն մի արհամարհանք դեպի այն, խախտում է մեղա-  
դրյալի իրավունքները:

Մենք ծանոթացանք այն սկզբունքներին, վորոնց վրա  
կառուցվում է դատական նիստը քրեական գործով: Այժմ  
մենք պետք է պարզենք այն պայմանները, վոր դատարանը  
պարտավոր է պահպանել, վորպեսզի ապահովված լինի  
դատական նիստի կանոնավոր վարումը: Դրանց մասին  
կխոսվի հետևյալ գլխում:

Գ Լ Ո Ւ Խ III

ԱՅՆ ԱՆՀՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՎՈՐՈՒՔ ԱՊԱՀՈՎՈՒՄ  
ԵՆ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՎԱՐՈՒՄԸ

Յերբ գործն անցնում է նախապատրաստական (տնորի-  
նական) նիստով և մեղադրյալը դատի յե տրվում—դատա-  
վորը պետք է կատարի այն գործողութունները, վորոնք  
անհրաժեշտ են, վորպեսզի ապահովված լինի դատական  
նիստի կանոնավոր վարումը: Այդ գործողութունները հե-  
տևյալներն են. 1) գործը քննութեան նշանակելը. 2) մեղա-  
դրյալին մեղադրական յեղրակացութեան պատճենը հանձ-  
նելը. 3) կողմերի միջնորդութունները լուծելը. 4) պաշտ-  
պան նշանակելը և 5) կարգադրութուն կողմերին, նրանց  
ներկայացուցիչներին, վկաներին և վորձազեաներին դա-  
տակոչելու մասին:

Քննենք այդ գործողութուններից յուրաքանչյուրն  
առանձին:

Հիմնական սկզբունքը, վորով պետք է ղեկավարվի դատարանն այս դեպքում, պետք է լինի հետևյալը. գործը դատարանում ստացվելու պահից մինչև նրա բնութագրումը պետք է ըստ հնարավորության քիչ ժամանակ անցնի:

Պետք է նկատի ունենալ, վոր վորքան ավելի հեռու լի գործի քննությունը հանցագործություն կատարման պահից, այնքան էլ ավելի դժվար է ապահովել գործի բոլոր հանգամանքների պարզումը դատական նիստում: Պատճառը հասկանալի չէ: Վկաներից մի քանիսը մեկնել են, մյուսները մոռացել են դեպքի մանրամասնությունները և ամբողջ գործն ընդհանրապես կորցրել է իր հասարակական նշանակությունը: Ուստի որևէք ճիշտ ժամկետներ է սահմանում գործերի քննություն համար: ՌԵՖՍՀ ՔՐ. Դատ. Որ. 242 հոդ. այսպես է արտահայտում այդ պահանջը. «Դատարանը պարտավոր է իր ստացած գործը քննել վոչ ուշ քան գործն ստանալու օրվանից յերկու շաբաթվա ժամկետում, իսկ յեթե գործը մտցված է նախապատրաստական նիստը, ապա վոչ ուշ քան մեկ ամսվա ընթացքում»: Այդ ժամկետները ծայրագույններն են և պարտադիր չեն, վոր բոլոր գործերով դրանք պահպանվեն: Յեթե հնարավոր է գործը քննել (առանց յերկուց կրելու, վոր ծանուցագրերը չեն հանձնվի կողմերին) և այդ ժամկետներից ավելի շուտ, ապա դրանց չպահպանելը կարելի չէ վողջունել միայն:

2. ՄԵՂԱԳՐԱԿԱՆ ՑԵՋՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԵՆԸ ՄԵՂԱԳՐՅԱԼԻՆ

ՀԱՆՁՆԵԼԸ

Գործը քննությունը նշանակելու հետ միաժամանակ դատարանը պարտավոր է կարգադրել մեղադրական յեզրակացություն պատճենը մեղադրյալին հանձնելու մասին: ՌԵՖՍՀ ՔՐ. Դատ. Որ. 235 հոդ. համաձայն այդ հանձնումը պետք է տեղի ունենա վոչ ուշ, քան գործի քննության սկզբից յերեք օր առաջ: Այդ պահանջը կատարելի է և վոչ մի շեղում այստեղ թույլատրելի չէ: Ճիշտ կվարվի այն դատարանը, վորը կներկայացնի այդ ժամկետը, քանի

վոր ժամկետի նման յերկարացումը հնարավորություն է տալիս մեղադրյալին ավելի լավ ծանոթանալու գործին, բայց դատարանի ամեն տեսակի փորձերն այդ ժամկետը կրճատելու ուղղությամբ պետք է համարել որևէքի կոպիտ խախտում: Ընդվորում, պետք է նկատի ունենալ, վոր վորպես մեղադրական յեզրակացությունը ժամկետին հանձնելու ապացույց ծառայում է վոչ թե դատարանի գործերում արված նշումը մեղադրական յեզրակացության պատճենն ուղարկելու մասին, այլ մեղադրյալի ստացականը մեղադրական յեզրակացության պատճենն իր կողմից ստանալու մասին: Վորպեսզի այստեղ վոչ մի թյուրլիցացություն առաջ չգա, պետք է ղեկավարվել հետևյալ կանոններով. մեղադրական յեզրակացությունը հանձնելու համար մեղադրյալը կանչվում է դատարան, յեթե նա ազատ է, կամ հանձնումը կատարվում է կալանավայրում, յեթե նա կալանքի տակ է: Յերկու դեպքում էլ մեղադրական յեզրակացություն հանձնելու մասին ստացական վերցնելը պարտադիր է. այդ ստացականում պետք է ճշտորեն ցույց տրված լինի մեղադրական յեզրակացությունը հանձնելու ժամը, ամսաթիվը, ամիսը, տարին և վայրը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՄԵՋՆՈՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Սովորաբար կողմերի ամեն տեսակի միջնորդությունները լուծվում են նախապատրաստական (տնօրինական) նիստում: Սակայն կարող են լինել դեպքեր, յերբ միջնորդություններն ստացվում են դատարանում արդեն այդ նիստից հետո: Այդ միջնորդությունները կարող են զանազան տեսակի լինել. այստեղ կարող է խնդիր լինել նոր վկաների կանչելու, փորձադիտություն նշանակելու, փաստաթղթեր պահանջելու մասին և այլն: Մերթեյ այդ միջնորդությունները այն հիման վրա, վոր նրանք արված են ուշացումով, դատարանն իրավունք չունի, հետևապես, նման միջնորդությունները ժողդատավորը պետք է լուծի միանձնյա, վորչափով նրանց քննությունը դատարանում կարող է անհրաժեշտ դարձնել գործի հետաձգումը միջնորդություններն անմիջապես բավարարելն անհնար լինելու պատճառով:

(Ժամանակ կխլի փաստաթղթեր բերելը, նոր կանչված վկաների ներկայանալը և այլն) :

4. ՊԱՇՏՊԱՆ ՆՇԱՆԱԿԵԼԸ  
(ՌեհմՍՀ Քր. Դատ. Որ. 55, 239 և 251 հոդ. հոդ.)

Մեր օրենքը գիտե այնպիսի դեպքեր, յերբ պաշտպան նշանակելը դատարանի համար պարտադիր է լինում անկախ այն բանից, թե խնդրում է այդ մասին մեղադրյալը, թե վոչ: Այդ դեպքերը հետևյալներն են. ա) այն գործերով, վորտեղ մասնակցում է մեղադրողը (մեղադրյալի հրաժարվելը պաշտպանութունից արգելք չի հանդիսանում մեղադրողի մասնակցութեանը). բ) անչափահասները գործերով. գ) համբերի, խուլերի և ընդհանրապես այն անձանց գործերով, վորոնք իրենց Ֆիզիկական պահատութունների հետևանքով ընդունակ չեն ճշտորեն ըմբռնելու նյա կամ այն յերևույթները: Մնացած բոլոր դեպքերում դատարանը կամ թույլ է տալիս մասնակցելու այն պաշտպանին, վորին մեղադրյալն է ընտրել, կամ ինքն է պաշտպան նշանակում, յեթե այդ մասին միջնորդել է մեղադրյալը: Նույն գործով յերկու և ավելի մեղադրյալների համար կարելի յե մեկ պաշտպան նշանակել այն դեպքում միայն, յեթե նրանցից մեկի պաշտպանութունը չի հակասում մյուսի պաշտպանութեանը: Հակառակ դեպքում յուրաքանչյուր մեղադրյալի համար սխտք է նշանակել առանձին պաշտպան: Պաշտպան նշանակելու վերաբերյալ օրենքով սահմանված կանոնները պարտադիր են դատարանի համար. այդ իրավունքների խախտումն անպայման առիթ է հանդիսանում դատավճիռը բեկանելու համար: Պաշտպան կամ պաշտպաններ նշանակելն անհրաժեշտ լինելու դեպքում դատավորը պահանջն օւղարկում է պաշտպանների կոլեգիային, վորի համար այդ պահանջը պարտադիր է և անպայման պետք է կատարվի: Պաշտպան նշանակելու կամ մասնակցելը թույլ տալու պահից նա իրավունք ունի տեսակցութուն ունենալու կարանքի տակ դտնվող մեղադրյալի հետ, վորի համար դատարանն օրդեր է տալիս պաշտպանին: Բացի այդ, պաշտպանն ինքը կամ մեղադրյալի հետ միասին իրավունք ունի ծանոթանալու գործին և անելու իրեն անհրաժեշտ քաղվածքներ:

5. ԿԱՐԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԿՈՂՄԵՐԻՆ, ՆՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉՆԵՐԻՆ, ՎԿԱՆԵՐԻՆ ՅԵՎ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻՆ ԴԱՏԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
(ՌեհմՍՀ Քր. Դատ. Որ. 239 հոդ.)

Գործը քննութեան նշանակելուց հետո դատավորը կարգադրում է ծանուցադրեր օւղարկել գործին մասնակցող բոլոր անձանց՝ մեղադրյալին, մեղադրողին, քաղաքացիական հայցվորին, վորձագետներին և վկաներին: Ծանուցադրերը պետք է օւղարկվեն այն հաշվով, վորպետքի հասցեյադրին հանձնվեն գործի քննությունից միքանի օր առաջ: Այդ անհրաժեշտ է յերկու պատճառներով՝ նախ, նրա համար, վորպետքի տվյալ անձը կարողանա ազատվել իր դրադմունքներից մինչև այն օրը, յերբ ինքը կանչվում է դատարան և, ապա, նրա համար, վորպետքի դատարան վերադարձվին ծանուցադրերի յերկրորդ օրինակները: Ծանուցադրերի յերկրորդ օրինակների ստանալը հնարավորութուն է տալիս դատարանին պարզելու, թե արդյոք հանձնելված է ծանուցադրը, թե վոչ, իսկ դա շատ եյական է, ինչպես մենք կտեսնենք ստորև, գործը քննելու հնարավորութեան հարցը լուծելիս:

Այս բոլորը կատարելուց հետո դատավորը դեռևս չի կարող համարել, վոր արել է արդեն ամեն ինչ, վորպետքի ապահովված լինի դատական նիստի կանոնավոր վարումը: Մտում են դեռևս մի շարք անհրաժեշտ գործողություններ, վորոնք օրենքով չեն կարգավորված, բայց վորոնք խիստ կարևոր են և վորոնց հաջող կատարումից անշուշտ նույնպես կախված է դատական նիստի կանոնավոր վարումը: Այդ գործողություններին վերաբերում են՝

ա) Գործի մանրագնիս ուսումնասիրությունը: Անկասկած, դատավորը ծանոթանում է գործին, յերբ այն մտցրվում է նախապատրաստական (տնօրինական) նիստը. բայց գործը նախապատրաստական նիստում քննվելուց հետո և մինչև դատական նիստը կարող է միքանի օր անցնել. դատավորն այդ ժամանակ քննել է այլ գործեր, և տվյալ գործի հանգամանքները կարող են նրա հիշողությունից անհետանալ: Ուստի անհրաժեշտ է գործի քննութեան նախորդակին կամ, յեթե ժամանակը թույլ է տալիս, գործի քննությունից մեկ-յերկու օր առաջ մանրագնին ուսում-

նասիրել այն, ծանոթանալ վկաների բոլոր ցուցմունքներին, կարգալ խուզարկություններին առգրավումներին արձանագրությունները, նայել գործում յեղած բոլոր փաստաթղթերը, խորանալ փորձադիտության յեղրակացության մեջ, յեթե այդպիսին կա գործում: Դատաւորը հատկապես մանրագնին պետք է ուսումնասիրի մեղադրյալի ցուցմունքներն ու նրա հարուցած բոլոր միջնորդությունները: Ուսումնասիրելով գործը, անհրաժեշտ է, թեկուզ և համառոտակի կերպով, գրի առնել այն հարցերը, վորոնք հղացել են դատաւորի մեջ գործը կարգալին:

Այդպիսի բաղաձեռնանի ծանոթացումը գործին թեւադրվում է այն կարեւոր և պատասխանատու դերով, վորն ունի դատաւորը, վորպես դատական նիստում նախագահող: Նա կառավարում է դատական նիստի ընթացքը, վերացնում է դատաքննությունից և կողմերի վիճարանությունից այն ամենը, ինչ վոր չի վերաբերում քննիչ գործին, նրա վրա պարտականություն է դրվում՝ տանել դատական նիստն այնպես, վորպեսզի լավագույն կերպով բացահայտված լինի ճշմարտությունը գործում և վորպեսզի պրոցեսն իր ամբողջութեամբ լուծի նրա առաջ դրված քաղաքական խնդիրները: Պարզ է, վոր այս բոլոր խնդիրները դատաւորը կարող է կատարել այն դեպքում միայն, յեթե մանրագնին ուսումնասիրի գործը:

բ) Ժողովրդական ատենակալներ կանչելը: Դատաւորը միջոցներ պետք է ձեռք առնի ժամանակին կանչելու Ժողովրդական ատենակալներին: Մենք ընդգծում ենք «ժամանակին» բառը, քանի վոր կարող է պատահել այնպես, վոր այն Ժողովրդական ատենակալները, վորոնք նշանակված են մոտակա հերթի, դատական նիստին չներկայանան: Վորպեսզի այդ պատճառով գործը չհետաձգվի, Ժողովրդական ատենակալներին պետք է ժամանակին կանչել:

Իացի այդ, Ժողովրդական ատենակալներին ժամանակին կանչելն անհրաժեշտ է նաև նրա համար, վոր նրանք նույնպես պետք է ծանոթանան գործին:

Չպետք է պահանջել Ժողովրդական ատենակալներից, վոր նրանք անպայման իրենք ուսումնասիրեն գործը, սակայն Ժողովրդական դատաւորը պարտավոր է նրանց ծա-

նոթացնել գործին և մատնանշել այն ստանձնահատկությունները, վոր նրա մեջ կան: Այս դեպքում միայն նրանք կարող են լինել դատական նիստի ակտիվ մասնակիցներ ու կատարել այն վեհ պարտականությունները, վոր դրված են նրանց վրա սրենքով և վոր նրանց վստահել են ընտրողները:

Գործի մանրագնին նախապատրաստումը յերաշխափորում է, վոր դատական նիստում բավականաչափ լրիվ կհետապտովի գործը և դատաւորները գործով ճիշտ դատաւճիտ կկայացնեն:

Ուսումնասիրելով գործը, ապահովելով գործին մասնակցող անձանց ժամանակին կանչելը, Ժողովրդական ատենակալներին գործին ծանոթացնելով, հոգ տանելով, վորպեսզի այն շենքը, վորտեղ պետք է քննվի գործը, պատշաճ կերպով նախապատրաստված լինի, ապահովելով ասրագա դատական նիստը քարտուղարով արձանագրություն կազմելու համար, դատաւորը կարող է համարի, վոր նա ձեռք է առել բոլոր միջոցները՝ գործի դատաքննությունը ճիշտ կազմակերպելու համար:

Գ Լ Ո Ի Խ IV

#### ԳՈՐԾԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՍՏԱԴԻԱՆԵՐԸ

Դատական նիստը պետք է անցկացվի միասնական և վորոշակի պլանով, վորպեսզի լավագույն կերպով ապահովված լինի ճշմարտության բացահայտումը: Այս նպատակով, սկսած դատական նիստի բացումից և մինչև վերջին մոմենտը՝ դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը դատաւճիտ կայացնելու համար՝ պրոցեսը պետք է անցկացնել բավարար հստակութեամբ, պարզորոշութեամբ ու վորոշակիութեամբ: Գործի դատաքննությունը պետք է ծավալվի վորոշ հաջորդականութեամբ, վորպեսզի յուրաքանչյուր հաջորդ գործողություն նախորդ գործողության ընդհանրապարտումը հանդիսանա, նրա վրա հիմնված լինի ու նրանով պայմանավորվի, իսկ պրոցեսի բոլոր մնացած մասերն իրենց ամբողջութեամբ պետք է նպաստեն

կատարված հանցագործութեան բացահայտմանը նրա բոլոր մանրամասնութիւններով ու բնորոշ գծերով: Այս իրազոր-ծելու համար դատական նիստը յուրաքանչյուր գործով բաղկացած է վորոշ, որենքով սահմանված, մասերից (ստադիաներից): Այդ մասերն են՝ 1) նախապատրաստա-կան ստադիա կամ դատական նիստի բացումը. 2) դատա-քննութիւնը. 3) կողմերի վիճաբանութիւնը. 4) մեղա-դրյալի վերջին խոսքը. 5) դատավճիռ կայացնելը և 6) դա-տավճիռ հրատարակելը:

Դատական նիստի ընթացքն ավելի հարմար ձևով ու սովորաբար կատարուելու համար քննենք այդ ստադիաներից յուրա-քանչյուրն առանձին:

1. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՍՏԱԴԻԱ  
(Ռեֆեւէ Քր. Դատ. Որ. 262—273 հոդ. հոդ.)

Այս ստադիայի նպատակն է լուծել գործը քննելու հնարավորութեան հարցը և անցկացնել այն բոլոր նախա-պատրաստական գործողութիւնները, վորոնք անհրաժեշտ են նրա համար, վորպէսզի գործի քննութիւնը նորմալ զարգանա:

Նախապատրաստական ստադիան սկսվում է այն բա-նից, վոր նախադահողը, համոզվելով, վոր դատավորներն ու քարտուղարն առկա յեն, վոր մեղադրյալը գտնվում է նիստի դահլիճում, բացում է նիստն ու հայտարարում, թե ինչ գործ է քննութեան առնվելու:

Նիստ կարեւոր է նիստը բացել հենց այն ժամին, վորը ցույց է տրված դատակոչի ծանուցագրում: Միանգամայն անթույլատրելի յէ այն դրութիւնը, յերբ կողմերը, վկա-ները, փորձագետները շատ ժամանակ են ծախսում գործի քննութեանն սպասելով:

Ժամանակը պետք է խնայել, անկարգապահութեան դեմ պետք է պայքարել և դատարանն առաջին հերթին պետք է աշխատանքի խիստ և ճիշտ կազմակերպութեան սրինակ ծառայի:

Յեթե մեկ նիստում միքանի գործ է նշանակված, պետք է այնպէս դատավորել, վորպէսզի դատակոչվածներն ըստ հնարավորութեան քիչ ժամանակ կորցնեն:

Բացելով նշանակված ժամին դատական նիստը, դատա-րանն ստուգում է, թե արդո՞ք ներկայացել են բոլոր կանչ-ված անձինք: Ստուգումը կայանում է նրանում, վոր նա-խադահը ղեմում է քարտուղարին, առաջարկելով հայտնել, թե ով է ներկայացել և ով է բացակա:

Մինչև դատական նիստի բացումը քարտուղարը պետք է ճշտորեն պարզի, թե ո՞րքով ով է ներկա և ով բացակա: Բացակայողների վերաբերմամբ քարտուղարը պետք է հա-վաքի այն բոլոր յեղած տվյալները, վորոնք բացատրում են նրանց բացակայութեան պատճառները: Պետք է հավաքել ծանուցադրելի յերկրորդ որինակները, տեղեկանքներ փոս-տից ծանուցադրելը չհանձնելու մասին, ամեն տեսակի զի-մումներ, վոր ստացվել են դատակոչվածներից, ցույց տա-լով իրենց բացակայելու պատճառները և այլն: Նախադահի հարցին, թե դատակոչվածներից ով է ներկայացել, քար-տուղարը հայտնում է, թե ով է բացակա և ինչ բացատրու-թիւններ կան ներկայանալու մասին: Լսելով քարտուղա-րի հայտարարութիւնը, դատարանն անցնում է գործը քնն-նելու հնարավորութեան հարցի լուծմանը:

Մեղադրյալի չներկայանալը (Ռեֆեւէ Քր. Դատ. Որ. 265, 266, 267 հոդ. հոդ.): Մենք արդեն զիտենք, վոր գոր-ծը պետք է քննութեան առնվի մեղադրյալի ներկայու-թեամբ: Որենքի վորոշումներն այս հարցի վերաբերմամբ հետեյալներն են. մեղադրյալի ներկայանալը պարտադիր չէ այնպիսի հանցագործութիւնների վերաբերյալ գործերով, վորոնցով չի կարելի վորպէս պատիժ նշանակել ազատա-զրկում. մնացած բոլոր գործերով մեղադրյալի ներկայա-նալը պարտադիր է և մեղադրյալի բացակայութեամբ գործ քննելը չի թույլատրվում: Հետևապէս, յեթ չի ներկայա-ցել մեղադրյալը, իսկ գործը պատկանում է այն կատե-գորիային, վորտեղ նրա ներկայանալը պարտադիր չէ, դատարանը լսում է կողմերի (մեղադրյալի, քաղաք. հայցվորի) հայտարարութիւնը գործը քննելու հնարավո-րութեան մասին և վորոշում է կայացնում մեղադրյալի բա-ցակայութեամբ գործը քննելու մասին կամ գործը հետա-ձգելու մասին, յեթ մեղադրյալի ներկայութիւնն անհրա-ժեշտ է համարվում:

Այն հարցը, թե արդյոք նման դործերով պետք է պահանջել, վոր մեղադրյալներն անսպասան ներկայանան, լուծվում է յուրաքանչյուր առանձին դեպքում՝ նայած դործի կոնկրետ հանդամանքներին: Այստեղ դատարանը պետք է նկատի ունենա դործի բարդութունը, թե վորքան պարզորոշ են դործում յեղած ապացույցներն ու կատարված հանցագործությունն ընդլին: Յեթե դատարանը մեղադրյալի ներկայութունը պարտադիր է համարում, կայացնում է այդ մասին վորոշում, վորը մեղադրյալի համար պարտադիր է և չկատարելու դեպքում մեղադրյալը կարող է բերման յենթարկել:

Այլ կերպ է լուծվում մեղադրյալի բացակայությամբ դործը քննելու հնարավորության հարցն այն դեպքերում, յերբ նրա ներկայութունը սրբարտադիր է: Ինչպես մենք արդեն ասացինք, այդպիսի դեպքերում դործը պետք է հետաձգել: Սակայն, որևէքը գիտե հետևյալ բացառությունները. դործը կարող է քննվել և մեղադրյալի բացակայությամբ՝ ա) մեղադրյալի անմիջականորեն տված համաձայնության դեպքում, բ) յեթե ապացուցված է, վոր մեղադրյալը խուս է տվել դատակոչի ծանուցադիրն ընդունելուց և գ) յեթե նա թաղնվում է դատից (ՌՍՖՍՀ Քր. Դատ. Որ. 265 հոդ. և մյուս միութենական հանրապետությունների Քր. Դատ. Որ. համապատասխան հոդ. հոդ.):

Մեղադրյալի բացակայությունը նրա վերաբերյալ դործը քննելիս ներկայացնում է իրենից այնպիսի մի խիստ շեղում մեր պրոցեսի հիմնական սկզբունքներից, վոր դատարանը պետք է հատուկ ուշադրութուն նվիրի այդ հարցին: Նախ, պետք է հատուկ մանրակրկիտությամբ պարզել, թե արդյոք առկա՞ յեն մեղադրյալի բացակայության այն պայմանները, վորոնց մասին խոսվում է վերոհիշյալ հոդվածում:

Մեղադրյալի «անմիջականորեն տված համաձայնությունը» պետք է հաստատված լինի գրավոր փաստաթղթով: Այնլի ճիշտ կլինի նման դեպքերում կանչել մեղադրյալին դատարան և պարզել, թե ինչու համար է նա խնդրում դործը քննել իր բացակայությամբ:

Նմանապես մանրագնին պետք է ստուգել մեղադրյալ

ծանուցադիր ընդունելուց հրաժարվելու փաստը: Ծանուցադիրը վերադարձնելը նշումով այն մասին, վոր մեղադրյալը հրաժարվել է ընդունել այն, ամենևին բավական չի, պետք է կրկնել դատակոչը հատկապես գործուղված մարդու միջոցով, վորը պետք է ակտ կազմի այն մասին, վոր մեղադրյալը հրաժարվել է ծանուցադիրն ընդունել, ընդլուծում այդ ակտի վրա պետք է ստորագրեն ընթերակաները:

Ե՛լ այնլի դրուշությամբ պետք է մոտենալ նույն հարցին այն ժամանակ, յերբ խոսքը մեղադրյալի դատից Բազմըվելու մասին է: Այս հանգամանքը պետք է փաստաթղթերով ապացուցված լինի. դործին պետք է կցվի տեղեկանք այն մասին, վոր հետախուզության ձեռք առած միջոցներով մեղադրյալի բնակավայրը հայտաբերել չի հաջողվել և վոր ըստ ճշտորեն ստուգված տվյալների մեղադրյալը փաստորեն թաղնվում է դատից:

Պարզելով այս հանգամանքները, դատարանը պետք է քննության առնի, թե արդյոք հնարավոր է և նպատակահարմար, նույնիսկ այդ պայմաններում, դործը քննել մեղադրյալի բացակայությամբ: Այնլի ճիշտ կլինի ոգտադործել այն իրավունքը, վորը տրված է դատարանին (ՌՍՖՍՀ Քր. Դատ. Որ. 267 հոդ.), այն է՝ բերման յենթարկել կամ ծայրահեղ դեպքում՝ փոխել խախտման միջոցը, բայց չքննել դործն առանց մեղադրյալի:

Այն դեպքերում, յերբ պարզվում է, վոր մեղադրյալը թաղնվում է դատից, դործը պետք է կասեցնել, քանի վոր անիմաստ է մի դատավճիռ կայացնելը, վորն է կատար չի անվելու: Յե՛վ միմիայն հատկապես բացառիկ դեպքերում, յերբ դատարանն անհրաժեշտ է համարում դործը քննել մեղադրյալի բացակայությամբ, նա պետք է այն հիմնավորի պատճառաբանված վորոշմամբ և դործը քննելուց հետո ուղարկի այն վճռաբեկ ատյանին հսկողության կարգով քննելու համար (ՌՍՖՍՀ Գերագույն Դատարանի Նախագահության 1932 թ. հունիսի 3-ի № 18 վորոշումը):

Դատախազի կամ պաշտպանի չներկայանալու դեպքում (ՌՍՖՍՀ Քր. Դատ. Որ. 268 հոդ.) պահպանվում են հետևյալ կանոնները. դործը նրանց բացակայությամբ կարող

ե քննվել այն դեպքում միայն, յերբ նրանց կարելի չե փոխարինել, ընդվորում, չներկայացած պաշտպանի փոխարինումը կատարվում է միմիայն մեղադրյալի համաձայնությամբ: Յեթե այդպիսի փոխարինում տեղի ունենալ չի կարող, ապա դործը պետք է հետաձգել, իսկ դատարան չներկայացած անձանց գործողութիւնների մասին դատարանը հայտնում է դատախազութեանը կամ պաշտպանների կողմից այն մեղաւորներին կարգապահական տուժիչ յենթարկելու համար:

Քաղաքացիական հայցվորի (ՌՍՖՍՀ Քր. Դատ. Որ. 269 հոդ.) կամ նրա ներկայացուցչի բացակայութեան դեպքում քաղաքացիական հայցը չի քննվում և դործը շարունակվում է: Սակայն, պետական և հասարակական հիմնարկների ներկայացուցչների բացակայութեանը, յերբ քաղաքացիական հայց է հարուցված նրանց կողմից յուրացումների և հափշտակումների վերաբերյալ գործերով, չի ազատում դատարանին այդպիսի հայցը քննելու պարտականութիւնից: Յեթե վորեւէ պատճառով դործը հետաձգվում է, քաղաքացիական հայցվորը կարող է նորից հարուցել իր հայցը:

Յեթե չի ներկայանում տուժողը կամ նրա ներկայացուցիչը (ՌՍՖՍՀ Քր. Դատ. Որ. 270 հոդ.) այն դործերով, վորոնցով նրան իրավունք է տրվում պաշտպանելու մեղադրանքը (ՌՍՖՍՀ Քր. Դատ. Որ. 10 հոդ.), դործը յենթակա չե կարման: Այս դեպքերում մեղադրյալը կարող է խնդրել դատարանին այնուամենայնիվ քննել իր գործը: Մեղադրյալի այդ միջնորդութիւնն անպայման պետք է բավարարել:

Մնացած բոլոր դեպքերում տուժողի բացակայութեամբ դործը քննելու հնարավորութեան հարցը լուծվում է նույն կարգով, ինչ վոր վկանների բացակայութեան դեպքում:

Փորձագետների չներկայանալու դեպքում (ՌՍՖՍՀ Քր. Դատ. Որ. 272 հոդ.) դործն անպայման պետք է հետաձգել, յերբ դործով փորձագիտութիւն նշանակելը պարտադիր է: Փորձագիտութիւնն անպայման նշանակվում է հետևյալ դեպքերում. ա) մահվան պատճառներն ու մարմնական վնասվածքների բնույթը վորոշելու համար և բ) մեղա-

4968. Կ.

դրյալի հողեկան վիճակը պարզելու համար: Բնական է, վոր նման դեպքերում դործը փորձագետի բացակայութեամբ քննելը հնարավոր չէ: Սակայն, պետք է նկատի ունենալ, վոր պարտադիր չէ հենց այն փորձագետների մասնակցութիւնը դատարանում, վորոնք յեզրակացութիւն են տվել նախաքննութեան ժամանակ: Իսկ յեթե փորձագիտութիւնն որեւէքով պարտադիր չի լինում, ապա հարցը լուծվում է նայած դործի կոնկրետ հանգամանքներին և կողմերի կարծիքը լսելուց հետո:

Վկաների չներկայանալը (ՌՍՖՍՀ Քր. Դատ. Որ. 371 հոդ.): Վկաները հանդիսանում են դործի ապացույցների գլխավոր աղբյուրներից մեկը: Նրանց չներկայանալը միշտ էլ բացասաբար է անդրադառնում դործի լրիվ ու մանրամասն քննութեան վրա: Բացակայող վկայի ցուցմունքները նախաքննութեան ժամանակ դրի առնելը բնականաբար չի կարող փոխարինել դատարանում վկայի տված ցուցմունքները: Ուստի, դատարանը վկաների բացակայութեամբ դործը քննելու հնարավորութեան հարցը լուծելիս պետք է յեւնի, նախ, այն հանգամանքից, թե արդյոք հնարավորութիւն ունի վկան նիտտին ներկայանալու և, ապա, վոր չափով տվյալ վկան կարող է փոխարինվել ներկա գտնվող այլ վկաներով: Այս հարցը դատարանը լուծում է վկայի ցուցմունքների կարևորութիւնը մանրազնին քննելուց հետո: Ընդվորում, պետք է նկատի ունենալ, վոր մանրազնին քննվում է վկայի բացակայութեամբ դործը լսելու հնարավորութեան հարցն անկախ այն բանից, թե ով է կանչել այդ վկային՝ մեղադրողը, թե պաշտպանը:

Բոլոր նշված հարցերով, լուծվեն դրանք դրական թե բացասական իմաստով, դատարանը պետք է լսի կողմերի կարծիքը և պատճառաբանված վորոշում կայացնի:

Գտնելով փորձագետների կամ վկաների բացակայութիւնը վոր հարգելի, դատարանն իրավունք ունի իր հայեցողութեամբ նրանց տուգանելու, բայց վոր ավելի քան 100 ուրբ., իսկ բացառիկ և հատկապես շարժմտորեն չներկայանալու դեպքերում, բերման յենթարկելու (ՌՍՖՍՀ Քր. Դատ. Որ. 62 հոդ.):



Գործը քննելու հնարավորութեան հարցը լուծելուց հետո նախադահողը վորոշ հաջորդականութեամբ պարզաբանում է գործին մասնակցող անձանց. նրանց իրավունքներն ու պարտականութիւնները: Այդ պարզաբանումն սկսւում է վկաներից: Հոտնկայս նրանք լսում են նախադասի պարզաբանումը, վոր նրանք պետք է ցույց տան այն ամենը, ինչ վոր իրենց հայտնի յե տվյալ գործով և վոր նրանք պատասխանատու յեն կեղծ ցուցմունքներ տալու համար: Այս պարզաբանումից հետո վկաներն առանձնանում են խորհրդակցական սենյակը, ընդվորում, նախադասը պետք է կարդաւրի, վորպետքի վկաները մինչև իրենց հարցաքննելը շփում չունենան ուրիշներէ հետ:

Վկաներից հետո կեղծ յեղրակացութեան հետևանքներէ մասին նախադուշացվում են վործադետները. նրանց նույնպէս պարզաբանվում է դատական նիստում ներկա դնալիլու, գործում յեղած իրեղեն ապացույցները քննելու և մեղադրյալին ու վկաներին յեղրակացութիւն տալու համար անհրաժեշտ հարցեր առաջարկելու իրավունքը:

Իրանից հետո նախադասը պարզաբանում է տուժողին, վոր նա իրավունք ունի քաղաքացիական հայց հարուցել այն վնասների հատուցման մասին, վոր նրան պատճառել է մեղադրյալը իր հանցավոր գործողութիւններով:

Յեթե տուժողը ցանկութիւն է հայտնում այդպիսի հայց հարուցելու, դատարանը վորոշում է կայացնում տուժողին քաղաքացիական հայցվոր ճանաչելու և հարուցված հայցի չափի մասին:

Այնուհետև նախադասը բացատրում է մեղադրյալին, վոր նա իրավունք ունի հարցեր տալու վկաներին, վործադետներին և մյուս մեղադրյալներին ու բացատրութիւններ ներկայացնելու ինչպէս ամբողջ գործի էյութեան, նույնպէս և առանձին հանդամանքների առթիւ, դատաքննութեան ամեն մի բոպելին: Այդ պարզաբանումները շարադրված պետք է լինեն մեղադրյալին պարզ և մատչելի ձևով. դատարանը պետք է համոզված լինի, վոր մեղադրյալը լրիւ չափով հասկացել է այդ պարզաբանումը: Այդպիսի պարզաբանում մեղադրյալին դատարանը պետք է

տա անկախ այն բանից, թե արդոք ունի նա պաշտպան, թե վոչ:

Իրանից հետո նախադասը հարցնում է կողմերին նրանց ունեցած միջնորդութիւնների մասին: Միջնորդութիւններ հարուցում է նախ դատախազը, ապա քաղաքացիական հայցվորը և հետո մեղադրյալը կամ նրա պաշտպանը:

Այդ միջնորդութիւնները կարող են դանազան տեսակի լինել ու վերաբերում են նոր վկաներ կանչելուն, վործադետութիւն նշանակելուն, բացի կանչված վործադետներից ուրիշ վործադետներ կանչելուն, դանազան տեսակի փաստաթղթեր պահանջելուն կամ կողմերի մոտ յեղած և ամեն տեսակի այլ ապացույցներ, վոր նրանք անհրաժեշտ են համարում վորոշ փաստեր ապացուցելու համար, գործին կցելուն: Նման միջնորդութիւններ հարուցելով, կողմերը պետք է պատճառաբանեն դրանք բավարարելու անհրաժեշտութիւնը: Դատարանը լսում է յուրաքանչյուր կողմի կարծիքը մյուս կողմի միջնորդութեան առթիւ և պատճառաբանված վորոշում է կայացնում միջնորդութիւնը բավարարելու կամ մերժելու մասին:

Կողմերի հարուցած միջնորդութիւնների քննարկումը դատարանի շատ կարևոր գործողութիւնն է հանդիսանում, սւստի չի կարելի ձիշտ համարել այդ միջնորդութիւններէ այնպիսի քննարկումը, վորը յերբեմն տեղի յե ունենում պրակտիկայում. դատարանը, չհեռանալով ինորհրակցական սենյակը, չխորհրդակցելով ատենակալների հետ, մերժում է միջնորդութիւնները, մեջ չբերելով վոչ մի պատճառաբանութիւն կամ մեջ բերելով չմտածված պատճառաբանութիւն: Դատարանը չահադրդոյած է գործի մանրակրկիտ և մանրամասն քննութեան մեջ և կողմերի ամեն մի միջնորդութիւն պետք է մեծ ուշադրութեամբ քննութեան առնել: Մերժել կարելի յե այն դեպքերում միայն, յերբ, նախ, այդ միջնորդութիւնը տվյալ գործին չի վերաբերում և, ապա, յերբ այն վոչ մի նոր բան չի մտցնում գործի մեջ. այդպիսի միջնորդութիւններ բավարարելը կճանրաբաններ դատարանին ավելորդ տվյալներով: Դատարանը պարտավոր է պարզել ինչպէս մեղադրյալին մեր-

կացնող, նույնպես և արդարացնող հանդամանքները, ուս-  
տի հավասար ուշադրութեամբ պետք է քննարկվին ինչպես  
դատախազի միջնորդութեանները, նույնպես և պաշտպանի  
միջնորդութեանները:

• Հաճախ դատարանը միանդամաձև սխալ է մերժում լրա-  
ցուցիչ վկաներ կանչելն այն հիման վրա, վոր «յեղած նյութ-  
եթերով և վկաներով մեղադրյալը լրիվ մեղկացվում է իր  
կատարած հանցագործութեան մեջ»: Այսպիսի խախտումնե-  
րով կայացրած դատավճիռը ճիշտ չի լինի և անպայման  
պետք է բեկանվի:

Գտնելով, վոր անհրաժեշտ է բավարարել կողմերի միջ-  
նորդութեանը նոր վկաներ, փորձադեմոստրացիաներ, նոր  
փաստաթղթեր պահանջելու մասին և այլն, դատարանը  
կարող է կամ զործը քննութեամբ հետաձգել, կամ իրա-  
զուծեք վերապահել կողմերին առանց ընդհատելու նիստը բե-  
րելու իրենց վկաներին, փորձադեմոստրացիաներ և ներկայացնելու  
այլ ապացույցներ:

Կողմերի հարուցած միջնորդութեանները լուծելուց հե-  
տո նախադահը հայտարարում է դատարանի կողմը, այ-  
սինքն, նախադահողի, ժողովրդական ատենակալների և  
քարտուղարի անունը, հայրանունն ու ազգանունը և պար-  
զարանում է կողմերին նրանց բացարկ հայտնելու իրա-  
վունքը (ՌԽՃՍՀ Քր. Դատ. Որ. 278 հոդ.):

Դատական նիստը կանոնավոր անցկացնելու համար պա-  
հանջվում է, վորպեսզի դատարանի կողմն օրինական լինի,  
այսինքն, վորպեսզի նրա կողմի մեջ մտած լինեն միմիայն  
օրենքով սահմանված կարգով ընտրված անձինք և վորպես-  
զի այդ կողմի անձինք իրար հետ ազգակցական կապեր չու-  
նենան:

Դատավորը չի կարող զործի քննութեանը մասնակցել  
հետեյալ դեպքերում (ՌԽՃՍՀ Քր. Դատ. Որ. 41 և 48  
հոդ. հոդ.). ա) յեթե նա կողմ է հանդիսանում կամ կող-  
մերից վորեւէ մեկի, ազգականն է, բ) յեթե նա կամ նրա  
ազգականը շահագրգռված է զործի վախճանում. գ) յեթե  
նա մասնակցել է այդ նույն զործին վորպես վկա, փոր-  
ձադեմոստրացիան, քննութեան կատարող անձ, մեղադրող, պաշտպան  
կամ քաղաքացիական հայցվորի ներկայացուցիչ:

Հավասարապես չի կարող դատական կողմում մասնակ-  
ցել նաև այն դատավորը, վորը մասնակցել է այդ նույն  
զործի քննութեանը յերկրորդ աստիճանում կամ յեթե այդ  
զործը քննվում է դատավճիռը բեկանվելուց հետո, վորը  
կայացնելու ժամանակ նույն դատավորը մասնակցել է:

Այս պայմաններից վորեւէ մեկի առկայութեան դեպ-  
քում դատավորը պարտավոր է ինքն իրեն բացարկել կամ  
բացարկվում է կողմերից մեկի հայտարարութեամբ: Դա-  
տավորի դեմ հայտնված բացարկը լուծում են զործին մաս-  
նակցող մնացած դատավորները բացարկվող դատավորի բա-  
ցակալութեամբ. ձայների հավասարութեան դեպքում դա-  
տավորը բացարկված է համարվում: Բացարկը քննարկվում  
է խորհրդակցական սենյակում բացարկման հանդամանքնե-  
րը մանրազնին քննելուց հետո: Կարող է պատահել և այն-  
պիսի հաղվագյուտ դեպք, յերբ բացարկը հայտնվում է ամ-  
բողջ դատական կողմի դեմ: Այս դեպքում նույն դատական  
կողմն էլ լուծում է բացարկման հարցը:

Բացարկման կանոնները վերաբերում են նաև դատա-  
խազին, դատական նիստի քարտուղարին, թարգմաններին  
և փորձադեմոստրացիան այն սահմանափակումով միայն, վոր  
նրանց նախորդ մասնակցութեանը զործին բացարկման  
հիմք չի ծառայում, ինչպես և հիմք չի ծառայում դատա-  
խազին բացարկելու այն հանդամանքը, վոր նա մասնակցել  
է զործի քննութեանը: Բացարկը լուծում է դատարանը:

Դրանով վերջանում է դատական նիստի նախապատ-  
րաստական ստադիան, և դատարանն անցնում է յերկրորդ  
ստադիային՝ դատաքննութեանը:

2. ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

(ՌԽՃՍՀ Քր. Դատ. Որ. 279—304 հոդ. հոդ.)

Դատաքննութեան սկսվում է մեղադրական յեզրակա-  
ցութեան ընթերցմամբ: Մեղադրական յեզրակացութեանը  
խոչոր պրոցեսուալ նշանակութեան ունի. նրա մեջ մեղա-  
դրական իշխանութեանն ամփոփում է մեղադրյալի դեմ  
ժողովված բոլոր ապացույցներն ու ձևակերպում իր տեսա-  
կետը ամփայլ հանցագործութեան վերաբերմամբ: Նրանից  
ներկա յեզրակներն իմանում են, թե ինչումն է մեղադրվում

տվյալ անձը և ինչպիսի արդարացյալներ են ժողովված նրա դեմ :

Հետևապես մեղադրական յեղբակացութեան ընթերցումը լուրջ ձևակերպութեամբ չի, և նախագահողը պետք է ամենայն լրջութեամբ վերաբերվի դեպի այն : Մեղադրական յեղբակացութեանը պետք է կարգալ բարձր ձայնով, պարզորոշ և հստակ, վորպեսզի բոլորի համար հասկանալի լինի, թե ինչ է կատարել մեղադրյալը և ինչով է այդ սպառնացվում : Զի կարելի, ինչպես այդ յերբեմն արվում է արագութեան համար, հրապարակել միմիայն մեղադրական յեղբակացութեան յեղբակակից մասը : Մեղադրական յեղբակացութեանը պետք է կարգացվի ամբողջովին, սկզբից մինչև վերջն առանց վորևէ կրճատումների : Մեղադրական յեղբակացութեանը սովորաբար հրապարակում է նախագահողը, բայց կարող է ընթերցել նաև դատական նիստի քարտուղարը : Այս դեպքում քարտուղարը հոտնեկայս, բարձր ձայնով և պարզորոշ ընթերցում է մեղադրական յեղբակացութեանը : Նրան կցված վկաների ցուցակը չի հրապարակվում :

Մեղադրական յեղբակացութեանը հրապարակվելուց հետո նախագահողը, անկախ այն բանից, թե արդյոք մեղադրյալը պաշտպան ունի, թե վոչ, պետք է իր խոսքերով, պարզ և հասկանալի կերպով բացատրի մեղադրյալին, թե ինչումն է նա մեղադրվում, ու հարցնի՝ ճիշտ է համարում նա արդյոք առաջադրված մեղադրանքը : Այս հարցը նախնական և կատարանի մեղադրյալը դրական կամ բացասական կերպով, դատարանն իսկույն չի անցնում նրա մանրամասն բացատրութեանները լսելուն. դատարանը սահմանափակվում է մեղադրյալի համառոտ պատասխանով՝ գտնում է թե չի գտնում նա ճիշտ առաջադրված մեղադրանքը : Այնուհետև նախագահը հարցնում է կողմերին, թե ինչ կարծով են նրանք անհրաժեշտ համարում տանել դատաքննութեանը :

Այդ կարգը յերկու տեսակի կարող է լինել՝ նա կարող է սկսվել մեղադրյալի և ապա վկաների հարցաքննութեանից կամ ընդհակառակը : Յեթե գործը խոչոր է, ունի իր

մեջ միջանի միջադեպեր, քննութեանը պետք է տանել այնպես, վորպեսզի սպառվի յուրաքանչյուր միջադեպն առանձին : Դրա համար յերբեմն հարցաքննում են նախ մեղադրյալներին և վկաներին ու այնուհետև մյուսներին : Թե ինչպիսի կարգ ընտրել տվյալ կոնկրետ դործում, կախված է գործի հանգամանքներից : Լուծելով այս հարցը, դատարանը պետք է ձգտի սահմանելու այն կարգը, վորը լավագույն կերպով կապահովի ճշմարտութեան հաջող հայտարարումը :

Դատարանը դատաքննութեան ընդունված կարգի մասին հատուկ վորոշում է կայացնում :

Մեղադրյալի հարցաքննութեանը (Քր. Դատ. Որ. 282—283 հոդ. հոդ.) : Բացատրութեաններ տալը մեղադրյալի իրավունքն է, այլ վոչ պարտականութեանը : Հետևապես, չի կարելի մեղադրյալից պահանջել, վոր նա անպայման բացատրութեաններ տա ու պատասխանի իրեն տրված հարցերին : Մեղադրյալը կարող է հրաժարվել բացատրութեաններ տալուց և չպատասխանել իրեն տրված հարցերին : Մեղադրյալի այդ հրաժարվելը չի կարող և չպետք է ազդի նրա մեղավորութեան հարցի լուծման վրա, և դատարանն իրավունք չունի դիմելու վորևէ միջոցների, վորպեսզի հարկադրած լինի մեղադրյալին բացատրութեաններ տալու :

Միակ իրավունքը, վոր այս դեպքում վերապահված է դատարանին, դա մեղադրյալի նախաքննութեան ժամանակ տված ցուցմունքը հրապարակելու իրավունքն է :

Իսկ յեթե մեղադրյալը հայտարարում է, վոր նա ուզում է բացատրութեաններ տալ և ճանաչում է իրեն առաջադրված մեղադրանքը ճիշտ, նախագահողը պետք է հնարավորութեան տա նրան մանրամասն շարադրելու այդ բացատրութեանները և ճշտորեն պարզելու, թե արդյոք նա իրեն հանցավոր ճանաչում է ամբողջ հանցագործութեան մեջ թե այն բոլոր հանցագործութեանների մեջ, վորոնցում նա մեղադրվում է : Այս հարցը ճշտորեն պարզելն անհրաժեշտ է դատական նիստի արձանագրութեան մեջ մտցնելու համար : Կարող է պատահել այսպես. ասանք, մեղադրյալը մեղադրվում է վատմամբ մեջ : Նախագահի

հարցին, թե արդյոք նա ճանաչում է իրեն հանցավոր, նա պատասխանում է՝ «Այո, ճանաչում եմ այն բանում, վոր անհրաժեշտ միջոցներ ձեռք չեմ առել, վորպեսզի վատնու-մը տեղի չունենար»: Քարտուղարը նշում է դատական նիս-տի արձանագրութեան մեջ «մեղադրյալը խոստովանեց», իսկ իրականում այստեղ վոչ մի խոստովանութիւն չկա:

Յեթե ճշտորեն չպարզվի, թե մեղադրյալն ինչու է իրեն հանցավոր ճանաչում, կարող է ստացվել շարամիտ թյուրիմացութիւն և դրա վրա հիմնված սխալ դատա-վճիռ:

Յեթե մեղադրյալն իրեն լրիվ հանցավոր է ճանաչում և այդ համապատասխանում է գործի բոլոր հանգամանքնե-րին, յեթե դատարանի և կողմերի հարցերին մեղադրյալը տալիս է պատասխաններ, վորոնք չեն հակասում գործով ժողովված փաստական տվյալներին, չեն փոփոխում այն մե-ղադրանքի ելութիւնը, վորով նա դատի յե տրված, և չեն պահանջում հանցագործութեան վորակման փոփոխում, — դատարանը կարող է, կողմերի կարծիքը լսելուց հետո, վորոշում կայացնել, հետագա դատաքննութիւն չկատարել, ազատել կանչված վկաներին և փորձադեմոնստրիին (յեթե մի-այն վերջինները չեն կանչված մեղադրյալի հոգեկան վի-ճակը կամ տուժողի մահվան պատճառները պարզելու հա-մար) և անցնել կողմերի վիճարանութեանը:

Իսկ յեթե մեղադրյալն իրեն հանցավոր չի ճանաչում և կամենում է բացատրութիւններ տալ առաջադրված մեղա-դրանքը հերքելու համար, դատարանն անցնում է նրա հար-ցաքննութեանը:

Հարցաքննութիւնը կատարում է նախ նախազահր, ապա դատարանի անդամները, հետո դատախազը, քաղա-քացիական հայցվորն ու պաշտպանը: Կարող է լինել և մի այլ կարգ: Հարցաքննութիւնն սկսում է դատախազը, ապա պաշտպանը, բայց այս դեպքում էլ նախազահրն ու անդամ-ները կարող են կողմի յուրաքանչյուր հարցաքննութիւնից հետո իրենց հարցերը տալ մեղադրյալին: Սակայն ավելի նպատակահարմար է այն կարգը, յերբ մեղադրյալին հար-ցաքննում են նախ կողմերը, իսկ նախազահրն ուշադրու-թյամբ հետևում է հարցաքննութեանը, վերացնում է այն,

ինչ վոր չի վերաբերում գործին, և կողմերի հարցաքննու-թյունից հետո, յեթե մնում են այս կամ այն չպարզված մոմենտները, հարցաքննում է մեղադրյալին, վորպեսզի ճշտի այդ մոմենտները:

Յերբ դատարանն ու կողմերը վերջացնում են մեղա-դրյալի հարցաքննութիւնը, վերջինին հարցեր կարող են տալ նույն գործով մյուս մեղադրյալները:

Վորպես կանոն, յուրաքանչյուր մեղադրյալ հարցա-քննվում է մնացած մեղադրյալների ներկայութեամբ: Սա-կայն կարող են լինել բացառիկ դեպքեր, յերբ մեղադրյա-լի հարցաքննութիւնը տեղի չի ունենում այլալ գործով մյուս մեղադրյալի կամ մեղադրյալների բացակայութեամբ: Դա լինում է, որինակ, այն ժամանակ, յերբ դատարանը դալիս է այն յեղրակացութեան, վոր մեղադրյալը չի կա-րող ճիշտ ցուցմունքներ տալ, քանի վոր գտնվում է մյուս մեղադրյալի ազդեցութեան տակ: Այս դեպքում, ճշմար-տութիւնը հայտարարելու համար նպատակահարմար է լի-նում հարցաքննել մեկ մեղադրյալին մյուսի բացակայու-թեամբ: Սակայն այդպիսի հարցաքննութիւնից հետո նա-խազահր պետք է ծանոթացնի բացակայող մեղադրյալին այն բացատրութիւններին, վոր տրվել են նրա բացակայու-թեամբ:

Մեղադրյալի բացակայութեամբ գործ քննելու դեպքում կամ, յեթե մահանում է մեղադրյալներից մեկը, դատարա-նի հայեցողութեամբ կամ կողմերից մեկի խնդրով կարելի յէ հրապարակել այն ցուցմունքը, վոր մեղադրյալը ավել է նախաքննութեան ժամանակ:

Վկաների հարցաքննութիւնը (Քր. Դատ. Որ. 284 հոդ.) կատարվում է զատ-զատ, այլ՝ դեռ Հարցաքննված, վկաների բացակայութեամբ: Մինչև վկային ըստ ելութեան հարցաքննելը նախազահր համոզվում է տվյալ վկայի ինք-նութեան մեջ, ստորգում է նրա վերաբերմունքը գործին մասնակցող կողմերին և հիշեցնում է, վոր անհրաժեշտ է ցույց տալ ճշմարտութիւնը և միմիայն այն, ինչ վոր իրեն հայանի յէ, և խուսափել այնպիսի անզեկութիւններից, վորոնց ազդուրը նա չի կարող ցույց տալ:

Դրանից հետո նախազահրն առաջարկում է վկային

պատմել այն ամենը, ինչ վոր իրեն հայտնի յն գործի մասին: Վկայի հարցաքննութեան կարգը նույնն է, ինչ վոր մեզադրյալինը: Նախադասից և դատարանի անդամներից հետո վկային հարցաքննում են այն կողմը, վորի միջնորդութեամբ այն վկան կանչվել է դատարան, իսկ հետո վկային հարցաքննում են մյուս կողմերը: Հարցաքննութեանը կարելի յն տանել խաչաձև, այսինքն, յուրաքանչյուր կողմ իրավունք ունի վկային լրացուցիչ հարցեր տալու և պարզաբանումն կամ և լրացումն այն պատասխանների, վոր նա տվել է մյուս կողմերի հարցերին: Յուրաքանչյուր վկա կարող է վերահարցաքննվել մյուս վկաների ներկայութեամբ, ինչպես նաև առերեսման բերվել նրանց հետ:

Առերեսում ասելով հասկացվում է յերկու վկաների միաժամանակյա հարցաքննութեանը: Սովորաբար այդ հարցաքննութեանը ղեկում են այն ղեպքերում, յերբ յերկու վկաներ գործի նույն հանդամանքի մասին տարբեր ցուցմունքներ են տալիս: Այդպիսի հարցաքննութեամբ ուզում են նրանցից մեկին մերկացնել ղեկավորյալ կեղծ ցուցմունքներ տալու մեջ կամ՝ հիշեցնել նրանցից վորևէ մեկին ավյալ հանդամանքի այնպիսի մոմենտներ, վորոնք նա կամ թաղցնում է, կամ այլ կերպ շարադրում: Ինքնին պարզ է, վոր առերեսումը կիրառվում է այն ղեպքերում, յերբ յերկու վկաների ցուցմունքների մեջ յեղած հակասութեանը շատ զգալի յն, իսկ ցուցմունքն ինքը գործի համար խիստ կարևոր:

Առերեսումը կիրառվում է այսպես. յերկու վկաները կանչվում են դատավորների սեղանի մոտ: Հարցեր են արվում մեկին, լսվում են նրա պատասխանները և նույն հարցերն առաջարկվում են մյուս վկային: Յերբմն այդպիսի հարցերը նախատավոր արդյունք են տալիս և մինչ այդ ուրացող վկան պատմում է այն, ինչ վոր նա թաղցրնում էր, կամ հրաժարվում է իր նախնական ցուցմունքներից:

Վորպես կանոն, վկաներն իրենց ցուցմունքները պետք է տան բանավոր, չղիմելով նշումների կամ փաստաթղթերի ընթերցմանը: Իսկ այն ղեպքերում, յեթե նրանց ցուցմունքները վերաբերում են վորևէ հաշվարկումների և այլ ավյալների, վորոնք ղեժվար է պահել հիշողութեան մեջ,

նրանք կարող են իրենց մոտ ունենալ գրավոր նշումներ: Այդ նշումները պետք է առաջադրվեն նախադասին, զննվեն դատարանի և կողմերի կողմից և նախադասի թույլտվութեամբ միայն վկան կարող է ոգտվել այդ նշումներից:

Հաջատարապես վկաները կարող են ոգտվել գրավոր փաստաթղթերից, բայց հրապարակել կամ մեջ բերել դրանք կարող են միմիայն այն ժամանակ, յերբ դատարանն ու կողմերը զննել են այդ փաստաթղթերն ու կցել գործին:

Վկաների ճիշտ հարցաքննութեանը դատական նիստում բացառիկ կարևոր նշանակություն ունի:

Ճիշտ տանել վկաների հարցաքննութեանը՝ մեծ արվեստ է: Դրան կարելի յն սովորել պրակտիկայում միայն, կենդանի և կոնկրետ գործերի վրա: Դժվար է հանձնարարել բոլոր ղեպքերի համար պիտանի վորևէ նմուշներ, բայց կան վորոշ ընդհանուր կանոններ, վոր դատարանին սպասկար է նկատի ունենալ, յերբ հարցաքննվում են վկաները: Այդ կանոնները կարելի յն շարադրել հետևյալ կերպ՝

ա) Վկային դատարանում ճիշտ հարցաքննելու համար պետք է լավ ուսումնասիրել նախաքննարկյալ ժամանակ տրված նրա ցուցմունքը: Միայն յեթե նախադասողը մանրադինն ուսումնասիրել է գործը, ղիտե նրա հանդամանքների բոլոր մանրուքները, ղիտե մանրամասն ավյալ վկայի ցուցմունքները, նա կարող է ինքը ճիշտ հարցաքննել վկային և ղեկավարել այն հարցաքննութեանը, վոր կատարում են կողմերը:

բ) Վկայի վրա չի կարելի բղավել, վկային չի կարելի սպառնալ, վկայի վրա չի կարելի ծիծաղել, վերաբերմունքը նրա հետ պետք է լինի զուտ, քաղաքավարի, նա պետք է զղա, վոր նրան վերաբերվում են վատահոլութեամբ, լուրջ, վոր նրա վրա նայում են վորպես մի մարդու, վորը կոչված է ոգնելու դատարանին՝ ըմբռնելու գործը: Դատարանի և կողմերի նման վերաբերմունքը տրամադրում է վկային՝ լինել անկեղծ և ցույց տալ ճշմարտութեանը: Այլ վերաբերմունքը բարկացնում է վկային, վիճել դատարանի հետ նա չի կարող—այդ նրան արդեմբում է—և նա փակվում է,

աշխատում ե մեծ մասամբ լռել, պատճառարանելով, վոր մոռացել ե .

բ) Վկային պետք է տալ պարզորոշ և հստակ հարցեր, վորպեսզի դրանց պատասխաններն ել լինեն պարզորոշ և հստակ: Ամենից լազին այն ե, վոր հարցերը արվեն այնպիսի ձևով, վորպեսզի ունենան միմիայն մեկ պատասխան՝ դրական կամ բացասական: Չի կարելի վկային թելադրող հարցեր տալ, այսինքն, այնպիսի հարցեր, վորոնք պարունակում են իրենց մեջ արված հարցի պատասխանը: Հարցերն իրենք պետք է արվեն այն ձևով, վորպեսզի հասկանալի լինեն վկային: Պետք է խուսափել ամեն տեսակի անհասկանալի կամ ոտարերկրյա բաներից և աշխատել վկայի հետ խոսել այն լեզվով, վորը նրան մոտիկ ե ու մատչելի:

գ) Չի կարելի վկային շփոթել փորձագետի հետ և հարցնել նրա կարծիքն այս կամ այն հարցի մասին: Վկան պետք է ցույց տա դատարանին միմիայն այն, ինչ վոր նա տեսել ե ու լսել: Նա փաստեր ե հաղորդում, այլ վոր կարծիք տալիս փաստերի մասին ե, հետևապես, հարցերը պետք է նպատակ ունենան վկաների միջոցով պարզելու գործի փաստական կողմը միայն՝

դ) Վկայի վոր յուրաքանչյուր ցուցմունքը կարելի յե կեղծ ցուցմունք համարել, վորի համար այդ վկային պետք է յենթարկել քրեական պատասխանատվության: Վկան կարող ե սխալ ցուցմունք տալ, բարեխղճորեն մոլորվելով, ուստի դատարանը չի կարող և չպետք է վկայի դեմ քրեական հետապնդում հարուցի յուրաքանչյուր դեպքում, յերբ դատարանում տված նրա ցուցմունքը հակասում ե նախաքննության ժամանակ տված ցուցմունքին կամ կա վորևէ այլ անճշտություն նույն վկայի ցուցմունքներում: Միմիայն այն դեպքերում, յերբ դատարանը հաստատ համոզմունքի յե հանդուհ, վոր այլալ վկան գիտակցաբար, դիտավորյալ կերպով ճիշտ չի ասում՝ դատարանին մոլորություն մեջ զցելու նպատակով, նա կարող ե իր հայեցողությամբ կամ դատախազի միջնորդությամբ քրեական հետապնդում հարուցել վկայի դեմ (ՌեՊՍՉ Քր. Գատ. Որ. 314 հոդ.) .

Կեղծ ցուցմունք տալու համար վկային պատասխանա-

տվություն յենթարկելու մասին վորոշում կայացնել կարելի յե, վորպես կանոն, դատավճիռ կազմելու պահին միայն, յերբ գործի բոլոր հանդամանքները լրիվ պարզված են դատարանի համար:

Վաղաժամ պատասխանատվության յենթարկելը, նախ, կարող ե սխալ լինել և, ապա, վատ անդադադունալ մնացած վկաների վրա ու վախեցնել նրանց:

Ահա այն հիմնական կանոնները, վորոնցով պետք ե զեկավարվել դատարանը վկաներին հարցաքննելիս: Այդ կանոնները հավասարապես կարելի յե կիրառել և մեղադրյալի հարցաքննություն վերաբերմամբ, այն տարբերությամբ, վոր մեղադրյալը չի կարող պատասխանատվության յենթարկվել կեղծ ցուցմունք տալու համար:

Հարցաքննությունից հետո վկաները չեն կարող դատական նիստի դահլիճից հետանալ առանց նախազահ թույլտվություն: Հետևապես, հարցաքննված վկաները մնում են դահլիճում մինչև դատաքննության վերջը: Սակայն, կողմերի համաձայնությամբ, այս կամ այն վկան կարող ե ազատվել մինչև դատաքննության վերջը:

Փորձագետների հարցաքննությունը (ՌեՊՍՉ Քր. Գատ. Որ. 298 հոդ.): Այն դեպքերում, յերբ, նախաքննության ժամանակ նշանակված ե լինում փորձագիտություն (եքսպերտիզա) կամ դատարանի կողմից ե թույլ արվում դատական նիստում, փորձագետների հարցաքննությունը կատարվում ե վկաների հարցաքննությունն ավարտելուց հետո: Նախազահն առաջարկում ե կողմերին դրափոր ձևով նախապատրաստել այն հարցերը, վոր նրանք անհրաժեշտ են համարում տալ փորձագետներին: Յերբ հարցերը նախապատրաստված են, հրապարակվում են նախազահողի կողմից և կողմերն իրավունք ունեն ներկայացնել իրենց բացատրություններն այս կամ այն հարցերի առթիվ: Գատարանը լսում ե կողմերի գիտողությունները և հաստատում հարցերի ցուցակը. նա իրավունք ունի նաև փորձագետներին առաջադրել ուրիշ հարցեր, բացի այն հարցերից, վոր նշել են կողմերը: Հաստատված հարցերը հանձնվում են փորձագետներին: Յեթե փորձագետները զժվարանում են անմիջապես պատասխանել, դատարանն ընդմիջում ե հայ-

տարարում փորձագետների խորհրդակցութեան համար:

Փորձագետներն իրավունք ունեն պահանջելու դործում յեղած նյութերը կամ նոր նյութեր, յեթե դրանք անհրաժեշտ են առաջադրված հարցերին պատասխանելու համար: Իրենց յեզրակացութիւնը փորձագետները ներկայացնում են դատարանին դրավոր ձևով: Փորձագետները հրատարակում են իրենց յեզրակացութիւնը, վորից հետո կողմերն իրավունք ունեն հարցեր տալ փորձագետներին, պատասխանները պարզելու և լրացնելու համար:

Փորձագիտութիւնը վոչ բաւարար պարզորոշ կամ լրիւ ճանաչելու, ինչպես նաև փորձագետների միջև տարաձայնութիւններ լինելու դեպքում դատարանն իր նախաձեռնութեամբ կամ կողմերից մեկի միջնորդութեամբ կարող է նոր փորձագիտութիւն նշանակել ու կանչել դրա համար նոր փորձագետներ: Յեթե փորձագետներին նույն դատական նիստում փոխարինել չի կարելի, գործը պետք է հետաձգել:

Փորձագետների յեզրակացութիւնը, վորպես ապացույցներից մեկը, դատարանի համար պարտադիր չէ և դատարանը կարող է չհամաձայնել նրա հետ: Այս դեպքում պահանջվում է, վորպեսզի դատարանը մանրամասն հիմնավորի իր չհամաձայնելը կամ դատաւճռում կամ առանձին վորոշման մեջ, յեթե դատարանն անհրաժեշտ է համարում փորձագետների մի կազմը այլ փորձագետներով փոխարինել: Փորձագետների դրավոր յեզրակացութիւնն անպայման կցվում է գործին:

Իրեդեն ապացույցների գնուութիւնը (ՌեՅՄՆՀ Քր. Դատ. Որ. 299 հոդ.) կայանում է նրանում, վոր նախազահողը ժողովրդական ատենակալներին ծանոթացնում է յեղած իրեղեն ապացույցներին և առաջարկում է կողմերին ու փորձագետներին՝ գննել այդ ապացույցները: Չպետք է կարծել, վոր իրեղեն ապացույցների գննումը տեղի յե ունենում վկաների հարցաքննութիւնից հետո միայն. այդ գննումը կարող է կատարվել դատաքննութեան ամեն մի բուպելում ինչպես դատարանի նախաձեռնութեամբ, նույնպես և կողմերի կամ փորձագետների միջնորդութեամբ: Իրեղեն ապացույցների գննութեան կապակցութեամբ կողմերն իրա-

վունք ունեն հարցեր տալու մեղադրյալին, վկաներին և փորձագետներին: Իրեղեն ապացույցներին իրավունք ունի ծանոթանալու նաև մեղադրյալը և իր բացատրութիւնները տալու դատարանին այդ առթիւ:

Հանցագործութեան վայրի գնուութիւնը (ՌեՅՄՆՀ Քր. Դատ. Որ. 301 հոդ.): Վորոշ դեպքերում, իր նախաձեռնութեամբ կամ կողմերի միջնորդութեամբ, դատարանը կարող է անհրաժեշտ համարել հանցագործութեան վայրի գննութիւնը: Այդպիսի անհրաժեշտութիւն կարող է առաջ դալ այն ժամանակ, յերբ գործի այս կամ այն հանդամանքները պահանջում են ստուգում կատարել տեղում, իսկ գործում յեղած տվյալների հիման վրա այդպիսի ստուգում չի կարելի կատարել: Տեղագննութիւն կատարելու մասին դատարանը վորոշում է կայացնում, վորի մեջ նշվում են այն հանդամանքները, վորոնց ստուգման համար այդ գննութիւնն անհրաժեշտ է համարվում: Վորոշման մեջ նաև ցույց է տրվում, յե արդյոք հարցաքննվելու յեն վկաները տեղում:

Դատու տեղագննութեան վայրը, նախազահը բացում է դատական նիստը, ընդվորում, կողմերն իրավունք ունեն խնդրել արձանագրութեան մեջ մտցնելու այն ամենը, ինչի վրա նրանք անհրաժեշտ են համարում դարձնել դատարանի ուշադրութիւնը: Այստեղ էլ հարցաքննվում են վկաները, յեթե դատարանը վորոշել է հարցաքննել վկաներին տեղում: Այդպիսի գննութեան ժամանակ մեղադրյալի ներկայութիւնն անհրաժեշտ է: Հենց այստեղ էլ նա կարող է տալ իր բացատրութիւններն ու պատասխանել իրեն տրվող հարցերին:

Մեղադրանքը փափոխելու և նոր անձանց դատի տալու մասին (ՌեՅՄՆՀ Քր. Դատ. Որ. 311—317 հոդ. հոդ.): Գործերը դատական նիստում քննվում են այն անձանց վերաբերմամբ միայն, վորոնք նախապատրաստական (տնօրինական) նիստում դատի յեն տրված յեղել:

Չի կարող այսպիսի դրութիւն լինել, վոր գործը քննութեան առնվի մի մեղադրյալի վերաբերմամբ, իսկ վերջանա մեկ ուրիշ դատապարտմամբ, վորը մինչ այդ դատի տրված չի յեղել: Այդպիսի դրութիւնը կլիներ դատաւա-

յութան հիմնական կանոնների կոպիտ խախտում և իրենից կենդակացնելու հեղափոխական օրինականություն խեղաթյուրում, օրինականություն, վերն անասան կանոն և սահմանում, վոր յուրաքանչյուր մեղադրյալի գործ պետք է անցնի վորոշված ստադիաները և վոր մեղադրյալը հնարավորություն պետք է ստանա զեռես նախաքննություն և գատի տալու ստադիայում ներկայացնելու բոլոր անհրաժեշտ արացուցներն իր պաշտպանություն համար: Ինքնին պարզ է, վոր նման պաշտպանություն իրավունք մեղադրյալը չի ունենա, յեթե նա միանգամից, առանց նախաքննություն նստեցվի մեղադրյալների աթոռին ու առանց նրան պաշտպանություն իրավունք վերապահելու գատավրճիս կարացվի:

Չի կարող լինել նաև այնպիսի դեպք, վոր մեղադրյալը գատի արվի մի հանցագործություն համար, իսկ դատապարտվի մի այլ հանցագործություն համար, վորը մեղադրական յեզրակացություն չի նախատեսված: Այստեղ էլ կստեղծվեն այնպիսի դրություն, վոր մեղադրյալը հնարավորություն չէր ունենա պաշտպանվելու: Դա նույնպես կլինի հեղափոխական օրինականության խեղաթյուրում և մեղադրյալի իրավունքների սահմանափակում: Այստեղ վորպես կանոն հանդիսանում է հետևյալ դրությունը՝ դատարանը բնում է գործը միմիայն այն անձի կամ անձանց վերաբերմամբ, վորում գատի յեկ տրվել և այն էլ՝ նրանց առաջադրված նախնական մեղադրանքի վերաբերմամբ:

Մակայն կարող են պատահել այնպիսի դեպքեր, յերբ դատաքննությունը պարզվում է, նախ, վոր մեղադրյալը բացի այն հանցագործությունից, վորի համար գատի յե տրված, կատարել է մի այլ հանցագործություն, վորի մասին մինչև դատը հայտնի չի յեղել և, ապա, վոր տվյալ մեղադրյալը կատարել է վոչ թե այն հանցագործությունը, վորի համար գատի յե տրված, այլ մի ուրիշ հանցագործություն, վորի համար ավելի ծանր պատիժ է նախատեսված: Որինակ, նա գատի յե տրված զերտավորյալ սպանություն համար, իսկ գատի ժամանակ պարզվել է, վոր նա առողորխտական ակտ է կատարել: Վերջապես, կարող է

պարզվել, վոր բացի տվյալ մեղադրյալից ուրիշ անձինք էլ են մասնակցել քննվող հանցագործությունը:

Ինչպես պետք է վարվի դատարանն այս դեպքում: Քննելը հնարավոր դեպքերից յուրաքանչյուրն առանձին:

1) Դատաքննության ժամանակ պարզվել է, վոր մեղադրյալը բացի այն հանցագործությունից, վորը բնվող գործի ստարկան է կազմում, նաև ուրիշ հանցագործություններ է կատարել:

Այստեղ կարող է յերկու դեպք լինել. ա) նոր հանցագործությունը կապված չէ այն հանցագործության հետ, վորի մասին գործ է քննվում և բ) նոր հանցագործությունը սերտորեն կապված է քննվող գործի հետ:

Որինակ, Իվանովը մեղադրվում է սպանություն մեջ, վորը նա կատարել է 1938 թ. հունվարին: Դատաքննության ժամանակ պարզվել է, վոր բացի սպանությունից Իվանովը զեռես 1937 թ. մարտին կատարել է սոցիալիստական սեփականություն հափշտակում:

Տույալ դեպքում պետք է վարվել այսպես. նոր հանցագործությունը սերտորեն կապված չէ սպանության հետ, վորը կատարել է Իվանովը: Հետևապես դատարանը վորոշում է կայացնում Իվանովի դեմ նոր գործ հարուցելու մասին, իսկ քննվող գործն ավարտում է և դատավճիռ կայացնում:

Իսկ յեթե նոր հանցագործության համար չի նախատեսված ավելի ծանր պատիժ, քան կարելի յե նշանակել սպանության համար և այդ նոր հանցագործությունը բաժանանին ապացուցված է հենց այս դատական նիստում, դատարանը կարող է, հատուկ վորոշում չհանելով մեղադրյալի դեմ նոր գործ հարուցելու մասին, դատավճռում պատիժ սահմանել նաև այդ նոր հանցագործության համար:

Իսկ այն դեպքերում, յերբ նոր հանցագործությունը սերտ կապված է լինում սկզբնական հանցագործության հետ և սկզբնականը հնարավոր չի լինում քննել առանց նոր հանցագործության նյութերը քննելու—գործը պետք է ուղարկել լրացուցիչ քննության, վորպեսզի պարզվեն այն բոլոր հանգամանքները, վորոնք հայտնի յեն դարձել դատաքննության ժամանակ:

Որինակ, մեղադրյալը դատի յե տրվել կողոպուտի մեղադրանքով: Դատական նիստում պարզվել է, վոր մեղադրյալը վոչ միայն կողոպուտի է, այլև բռնարարել է կողոպտվածին: Քանի վոր այս նոր հանցագործութունը սերտորեն կապված է նախնական հանցագործության հետ, գործը քննությամբ ավարտվել չի կարող: Նա պետք է հետաձգվի և ուղարկվի լրացուցիչ քննության:

2) Դատաբնության ժամանակ պարզվել են այնպիսի հանգամանքներ, վորոնք պահանջում են փոփոխել մեղադրանքի ձևակերպումն ու հետևապես փոփոխել նույնպես քրեական որեևս գրքի հոդվածը: Այստեղ ևս կարող է յերկու դեպք լինել՝ ա) մեղադրանքի նոր ձևակերպումն ավելի ծանր պատիժ է նախատեսում և բ) մեղադրանքի նոր ձևակերպումը պատժի խստացում չի նախատեսում:

Առաջին դեպքում գործը պետք է հետաձգել և ուղարկել լրացուցիչ քննության. յերկրորդ դեպքում դատարանը կարող է փոփոխել հանցագործության վորակումը և պատիժ սահմանել այդ նոր վորակմամբ:

Որինակ, Իվանովը դատի յե տրվել վորակյալ սպանության համար. դատական նիստում պարզվել է, վոր այդ սպանությունը տեոորիստական ակտ է հանդիսանում: Այս դեպքում դատարանը պարտավոր է գործը քննությամբ հետաձգել և ուղարկել լրացուցիչ քննության: Մի այլ որինակ: Իվանովը դատի յե տրվել դիտավորյալ սպանության համար, բայց դատական նիստում պարզվել է, վոր այդ սպանությունը կատարվել է անողուշությամբ: Գործը չպետք է հետաձգել: Դատարանը կայացնում է դատավճիռ այն հողվածով, վորը պատժում է անողուշ սպանության համար:

3) Դատաբնության ժամանակ պարզվել է, վոր բացի այն մեղադրյալից, վորի գործը բնում է դատարանը, հանցագործությանը մասնակցել են նաև այլ անձինք, վորոնք դատի չեն տրվել: Այստեղ ևս կարող է յերկու դեպք լինել. ա) այն հանցագործությունները, վոր կատարել են նոր անձինք, սերտորեն կապված են այն հանցագործության հետ, վորը կազմում է տվյալ դատաքննության առարկան և բ) նոր անձանց կատարած հանցագործությունները կապված չեն այդ հանցագործության հետ:

Առաջին դեպքում գործը հետաձգվում է և ուղարկվում լրացուցիչ քննության, այդ նույն գործով նոր անձանց պատասխանատվության յենթարկելու համար. յերկրորդ դեպքում՝ նոր անձանց վերարեքյալ գործն առանձնացվում է և հանձնվում դատախազին, իսկ քննվող գործն ավարտվում:

Որինակներ: Իվանովը մեղադրվում է իշխանությունն ի չարը գործադրելու համար. դատարանում պարզվում է, վոր նա այդ հանցագործությունները կատարել է հոգուս Պետրովի, վորն Իվանովին կաշառք է տվել: Պետրովը պետք է քրեական պատասխանատվության յենթարկվի, սակայն, քանի վոր նրա հանցագործությունը սերտ կապված է Իվանովի հանցագործության հետ, գործը հետաձգվում է և ուղարկվում լրացուցիչ քննության:

Քննվում է գործ ըստ մեղադրանքի Իվանովի իշխանությունն ի չարը գործադրելու համար:

Դատաքննության ժամանակ պարզվել է, վոր Իվանովի պետք ինքնուրույնաբար և անկախ Իվանովից կաշառք է վերցրել: Այս հանցագործությունն առաջինի հետ կապված չէ և չի խանգարում, վորպեսզի առաջին գործով դատավճիռ կայացվի: Այս դեպքում սկսված գործը քննությամբ ավարտվում է և դատարանը վորոշում է կայացնում նոր անձանց պատասխանատվության յենթարկելու մասին. ու այդ վորոշումն ուղարկում է դատախազին:

Մեր քննած բոլոր դեպքերը ցույց են տալիս, վոր որենքը հետևյալ պահանջներն է առաջադրում.

1. Գործը կարող է քննվել այն անձանց վերարեքմամբ միայն, վորոնք դատի յեն տրվել մինչև դատական նիստը:

2. Մեղադրյալը հանցավոր կարող է ճանաչվել այն հանցագործության մեջ միայն, վորով նա դատի յե տրված յեղել:

3. Մեղադրանքի ձևակերպման փոփոխությունը կարող է տեղի ունենալ այն դեպքում միայն, յեթե այդ փոփոխությամբ չի խստանում պատիժը:

4. Նոր անձինք կարող են դատվել սահմանված կարգով դատի տրվելուց հետո միայն:

Որենքի այս պահանջները պարտադիր բնույթ ունեն։ Վորեն չեղումներ թույլ տալու դեպքում դատաւճիւրը դառնում է սխալ ու յենթակա բեկման։

Գործը լրացուցիչ ֆինուքյան ուղարկելը (Քր. Դատ. Որ. 302 հոդ.)։ Մենք տեսանք, վոր դատարանը կարող է, իսկ յերբեմն ել պետք է, գործն ուղարկի լրացուցիչ քննության այն դեպքերում, յեթե անհրաժեշտ է պատասխանատվության յենթարկել նոր մեղադրյալների կամ փոփոխել առաջադրված նախնական մեղադրանքի վորոշումը։

Սակայն կարող են լինել դեպքեր, յերբ գործը լրացուցիչ քննության ուղարկելու անհրաժեշտությունը պայմանավորվում է նաև այլ պատճառներով։

Կարող է լինել այնպես, վոր դատարանը դատաքննության ժամանակ դալիս է այն համոզման, վոր գործի համար կարևոր մի շարք հանգամանքներ չեն պարզված։ Ասենք, խոտքը վատնման մասին է. մինչդեռ նախաքննության ժամանակ հաշվապահական փորձադիտություն կատարված չի յեղել. իսկ մեղադրյալը մեջ է բերում փաստաթղթեր, վորոնք գործին չեն կցված, բայց վորոնք զգալիորեն կփոփոխեն գործի եյուլթյունը, յեթե ժամանակին պահանջված լինէին։ Լրացնել այս բացը դատական քննության ժամանակ անհնար է, քանի վոր նիստը ստիպված կլինէին միքանի որով ընդհատել մինչև ձեռք կբերվէին այդ փաստաթղթերը և մինչև փորձազեաները կարող կլինէին ավարտել իրենց աշխատանքը։ Այս դեպքում ավելի նպատակահարմար է գործը քննությամբ հետաձգել և ուղարկել լրացուցիչ քննության։

Գործը լրացուցիչ քննության ուղարկելու մասին դատարանը վորոշում կարող է կայացնել իր նախաձեռնությամբ, բայց այդպիսի վորոշման մասին կարող են միջնորդել նաև կողմերը։ Վորոշման մեջ ճշտորեն պետք է հիշատակված լինի, թե ինչպիսի հանգամանքներ պետք է պարզել լրացուցիչ քննությամբ և ինչպիսի փաստաթղթեր պետք է հավաքել գործով։

Գործի յուրաքանչյուր հետաձգում և հատկապես հետաձգումը լրացուցիչ քննություն կատարելու համար,

ցանկալի չէ, քանի վոր ձգձգում է գործը, թուլացնում հավաքված ապացույցների ուժն ու միշտ բացասական տպավորություն է թողնում գործը լսողների վրա։ Ուստի, գործը պետք է հետաձգել այն դեպքերում միայն, յեթե իրոք նույն նիստում գործի քննությունը հնարավոր չէ առանց ճշմարտության բացահայտմանը վնասելու։ Գործ հետաձգելը միշտ ել ապացուցում է, վոր այն բավարար չափով չի նախապատրաստված, և նախապատրաստական (տնորինական) նիստն անհրաժեշտ ուշադրություն չի նվիրել գործում յեղած նյութերի վերլուծությանը։ Բայց, համենայն դեպս, դատարանը պետք է նկատի ունենա, վոր յեթե գործում կան չպարզված հանգամանքներ կամ հայտարարված են նոր հանգամանքներ, վորոնք կարող են պարզվել լրացուցիչ քննությամբ միայն, ապա պետք է մի կողմ թողնել գործի հետաձգման անհարմարությունն ու դատաւճիւր չկայացնել, յեթե դատարանը կասկածներ ունի։

Դատաֆինուքյան ավարտումը (ՌեՖՍՆ Քր. Դատ. Որ. 303 հոդ.)։ Յերբ արդեն հարցաքննված են բոլոր վկաները, լաված է փորձազեաների յեզրակացությունը, զննված են իրեղեն ապացույցներն ու դատարանը վորոշել է, վոր գործը յենթակա չէ հետաձգման, նախադահր հարցնում է կողմերին, թե արդյոք ուզո՞ւմ են նրանք վորեն կերպ լրացնել դատաքննությունը։ Դատաքննության այս մոմենտը շատ կարևոր է, քանի վոր ամեն տեսակի միջնորդություններ կողմերը կարող են հարուցել այս մոմենտում միայն, այսինքն, դատաքննությունն ավարտվելուց առաջ. դատաքննությունից հետո հարուցված միջնորդությունները կապված են քննության վերակաման բարդ կարգի, ավելորդ ժամանակ ծախսելու և պրոցեսի խճողման հետ։ Ուստի կողմերը շատ ուշադիր պետք է լինեն դեպի դատաքննության այս մոմենտը, նրանք պետք է մանրամասն պարզեն, թե գործում յեղած վոր փաստաթղթերը պետք է հրապարակվեն և վորոնք նորից կցվեն գործին։ Պետք է հիշել, վոր կողմերն իրենց ճառերում, վորոնք սկսվելու յեն դատաքննությունը վերջանալուց հետո, կարող կլինեն հիմնվել այն նյութերի վրա միայն, վորոնք կան գործում, իսկ նոր

նյութերի վրա՝ այն դեպքում միայն, յեթե դրանք դատարանի վորոշմամբ կցված են դործին:

Լսելով կողմերի միջնորդությունները, դատարանը վորոշում է կայացնում միջնորդությունները բավարարելու կամ մերժելու մասին և հայտարարում է դատաքննությունն ավարտված:

Քննարկելով կողմերի միջնորդությունները՝ դատարանը պետք է զեկախարայի հետևյալ կանոններով. անպայման բավարարվում են այն բոլոր միջնորդությունները, վորոնք վերաբերում են դործում յեղած նյութերի կամ կանչված, բայց չնեղկայացած վկաների ցուցմունքների հրապարակմանը. մնացած միջնորդությունների բավարարումը կախված է այն բանից, թե վոր չափով այս կամ այն միջնորդությունը վերաբերում է գործին: Այս դեպքում անպայման բավարարվում են այն միջնորդությունները, վորոնք պարզարանում են գործի հանգամանքները, նպատում են մեղադրյալի ինքնությունը պարզելուն և կամ խտտացնում կամ մեղմացնում են նրա մեղավորության չափն ու բնույթը:

Դատաքննությունը վերջանալուց հետո դատարանն անցնում է պրոցեսի հաջորդ ստադիային, այն է՝ կողմերի վիճարանությանը:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՎԻՃԱՐԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1) Դատաքննության այդ ստադիայի նշանակությունը: Կողմերի վիճարանությունը խոշոր նշանակություն ունի յուրաքանչյուր քրեական գործում: Մեղադրողն ու պաշտպանը հնարավորություն են ստանում ի մի բերելու գործով հավաքված բոլոր հանգամանքները, արժեքավորելու այդ հանգամանքները, մանրագնին վերլուծության յենթարկելու և ոգնելու դատարանին բոլոր նյութերը ըմբռնելու գործում:

Հատկապես խոշոր նշանակություն ունի դատախազի ճառը: Պետական իշխանության անունից նա արժեքավորում է հանցագործությունը, պարզում է նրա հասարակական և քաղաքական նշանակությունը, հանցագործություն կատարող անձի սոցիալական վտանգավորությունը և ցույց

է տալիս այն պատիժը, վորին նա պետք է յենթարկվի:

Վոչ մի բուպե աչքաթող չանելով իր կատարած պետական խնդիրը, դատախազը պարտավոր է մանրագնին քննել ու յուսաբանել այն ապացույցները, վոր հաստատում են հանցավորի մեղքը: Յուրաքանչյուր գործի քաղաքական և հասարակական նշանակությունը կարգովի այն դեպքում միայն, յեթե դատախազն ապացուցի մեղադրյալի հանցանքը: Այլ դրությունը հակառակ արդյունքների յե բերում: Ապացույցների բացակայությունը կամ գործի հանգամանքների անտեսումը դատախազի ճառը դարձնում է անհամոզեցուցիչ, և վորքան էլ այդ ճառն իր ձևով լավ լինի, նպատակին չի հասցնի:

Դատախազից պահանջվում է, վոր տվյալ հանցագործության քաղաքական արժեքավորումը, գործի հասարակական նշանակության սրբզումն անխզելիորեն կապված լինեն գործի կոնկրետ հանգամանքների հետ: Յեթե այդ կապը դատախազի ճառում բացակայում է, ապա նրա ճառը վոչ միայն ոգտակար չէ, այլ վնասակար է:

Վոչ պակաս նշանակություն ունի նաև պաշտպանի ճառը: Սորհրդային պաշտպանը պաշտպանում է վոչ թե մեղադրյալի կատարած հանցագործությունը, այլ մեղադրյալին իրեն: Հետևապես նա պարտավոր է ներկայացնելու դատարանին այն բոլոր տվյալները, վորոնք հերքում են մեղադրողի փաստարկները և կարող են թուլացնել մեղագրյալի հանցանքի ու պատասխանատվության չափը: Մեղադրյալի շահերի տեսակետից յուսաբանելով գործի հանգամանքները, պաշտպանն ոգնում է դատարանին, հնարավորություն տալով նրան տարբեր տեսակետներից արժեքավորելու յուրաքանչյուր ապացույց: Դատարանն արժեքավորում է մեկ և մյուս կողմի փաստարկներն ու ավելի հեշտ է վորոչ յեղրակացության գալիս գործում յեղած ապացույցների նշանակության մասին:

2) Կողմերի վիճարանության կարգը: Այն նշանակությունը, վոր ունի կողմերի վիճարանությունը, բացատրում է նրա վորոչ կարգը պահպանելու անհրաժեշտությունը: Վորպեսզի լավագույն կերպով յուսաբանված լինի գործը, լրիվ քննված գործի ապացույցներն ու առավելագույն

չափով պահպանված մեղադրյալի իրավունքները, սահմանված է ճառերի արտասանման հետևյալ կարգը. առաջին իր բացատրություններն է տալիս դատախազը կամ հասարակական մեղադրողը (յեթե նա յե մեղադրում), այնուհետև քաղաքացիական հայցվորը, նրանցից հետո խոսում է պաշտպանը, իսկ նրա բացակայության դեպքում՝ մեղադրյալն ինքը: Թե ինչու յե այդպիսի կարգ սահմանված, միանգամայն պարզ է: Մեր պրոցեսում գոյություն ունեցող հիմնական սկզբունքի համաձայն հանցագործության կատարումն ապացուցելու պարտականությունն ընկնում է մեղադրողի վրա: Ուստի նրան առաջին խոսքն է տրվում. նա պետք է ներկայացնի ամբողջ մեղադրական նյութն այն հաշվով, վորպեսզի մեղադրյալն անձամբ կամ պաշտպանի միջոցով կարողանա իր փաստարկները ներկայացնել մեղադրանքի դեմ:

Ինքնին պարզ է, վոր վոչ մի սահմանափակում ժամանակի տեսակետից վոչ մեղադրողի և վոչ էլ պաշտպանի համար չի վորոշվում. այստեղ տեղի ունենալ չի կարող ուղղամենտը, վորով սովորաբար սղտվում են ժողովներում, յե լույթ ունեցող հոետորների համար: Կողմերը պետք է իրավունք ունենան անսահմանափակ ժամանակով շարադրելու իրենց նկատառումներն ու բացատրեն դատարանին այն ամենը, ինչ անհրաժեշտ են համարում: Յեթե այդ բացատրությունների համար կողմին նույնիսկ մի քանի ժամ է անհրաժեշտ, նա այդ ժամանակը պետք է ստանա:

Հիմնական ճառից հետո կողմերից յուրաքանչյուրը «ուեպլիկայի», ինչպես ասված է որենքում, իրավունք ունի «ուեպլիկա» ասելով պետք է հասկանալ դատախազի պատասխանը պաշտպանի ճառին և պաշտպանի առարկությունը դատախազի պատասխանին: Վիճաբանությունը վերջանալուց հետո կողմերը կարող են մի անգամ ևս փոխանակվել ուեպլիկաներով: Վերջին ճառի իրավունքը միշտ էլ պատկանում է պաշտպանին կամ մեղադրյալին, յեթե պաշտպան չկա:

Ինչպես իրենց հիմնական ճառերում, նույնպես և ուեպլիկաներում կողմերը կարող են ողտվել այն նյութերից միայն, վորոնք կան գործում կամ դատարանի կողմից կցված

են գործին: Վոչ մի նոր հանգամանքներ, վոր դատարանի կողմից քննված չեն յեղել, վոչ մի նոր փաստաթղթեր, վոր ժամանակին կցված չեն յեղել գործին, չեն կարող վորպես նյութ ծառայել կողմերի վիճաբանության համար:

Վերլուծելով գործի նյութերը, կողմերը պարտավոր են նաև իրավաբանական նկատառումներ ներկայացնել հանցագործության այն վորակման կամ պատժամիջոցի մասին, վորն ըստ իրենց կարծիքի պետք է կիրառել մեղադրյալի վերաբերմամբ:

Դատախազը քրեական գործում, հանդիսանալով պետական իշխանության ներկայացուցիչը, իրավունք ունի հրաժարվելու մեղադրելուց, յեթե գործի հանգամանքները բերել են նրան այն համոզման, վոր մեղադրյալը հանցավոր չի: Բայց, հրաժարվելով մեղադրելուց, դատախազը պարտավոր է հիմնավորել այդ, վորպեսզի դատարանին և ունկընդիրներին պարզ լինի, թե ինչպիսի շարժառիթներով է նա հրաժարվում: Մեղադրելուց հրաժարվելը չի ազատում դատարանին գործի քննությունը շարունակելու և դատավճիռ կայացնելու պարտականությունից:

Պաշտպանին պաշտպանելուց հրաժարվելու իրավունք չի վերապահված: Նա չի կարող հրաժարվել պաշտպանելուց այն հիման վրա միայն, վոր համոզվել է մեղադրյալի հանցավոր լինելու մեջ: Նույնիսկ այն դեպքերում, յերբ մեղադրյալը լրիվ խոստովանում է իր հանցանքը, պաշտպանը չի կարող հրաժարվել իր վրա դրված պարտականություններից: Նա պետք է դատարանին ցույց տա այն բոլոր հիմունքները, վորոնք մեղադրյալին ներողամտության և պատժի մեղմացման իրավունք են տալիս: Մյլ դրությունը ծանր պայմաններ կատեղծեր մեղադրյալի համար և կզրկեր նրան այն թանգարժեք իրավունքից, վորը նրան վերապահված է Ստալինյան Սահմանադրությամբ՝ պաշտպանության իրավունքից:

3) Նախագահի իրավունքը կողմերին վիճաբանության ժամանակ կանգնեցնելու նկատմամբ: Մենք արդեն խոսեցինք այն մասին, վոր կողմերի համար վիճաբանության ժամանակ չի կարելի վորեւե ուղղամենտ սահմանել, նրանք իրավունք ունեն խոսելու անսահմանափակ ժամանակով:

Սակայն սխալ կլիներ այդ իրավունքը հասկանալ այնպես, վոր կողմերը կարող են խոսել ինչի մասին ուղենան և վոր դատարանը հնարավորութուն չունի ղեկավարելու վիճարանութունը: Այն ընդհանուր կանոնը, վոր նախադասը, վորպես պրոցեսի տեր, ղեկավարում է վողջ դատաքննութունը, իր ուժի մեջ և մեռւմ նաև վիճարանության ժամանակ: Յեթե կողմը դուրս է գալիս քննիչը գործի սահմաններէ, յեթե նա թույլ է տալիս իրեն վիրավորական կամ անհարգելի կարծիքներ մասնավոր անձանց, իշխանության մասին և այլն, նախադասը պարտավոր է կանգնեցնել խոսողին և մատնացույց անել նրան իր արտահայտությունների անթույլատրելիութունը:

Սակայն այդ իրավունքից պետք է զգուշությամբ ոգտը վել, վորպեսզի այնպիսի տգալորութուն չտացվի, վոր դատարանը հնարավորութուն չի տալիս կողմին արտահայտելու իր բոլոր նկատառումները գործի առթիւ: Յեւ նկատողութունն էլ, վոր նախադասը անհրաժեշտ է համարում անել խոսողին, վիրավորական չպետք է լինի կողմի համար և չպետք է վերածվի բանավեճի: Հանգիստ և քաղաքավարի կերպով նախադասը կանգնեցնում է խոսողին, մատնացույց է անում նրա վարմունքի սխալ լինելը և առաջարկում է հետագայում չկրկնել նման արտահայտություններ: Նախադասը կանգնեցնելու իրավունք ունի ինչպես ղատախապին, նույնպես և պաշտպանին:

Պաշտպանի կամ մեղադրյալի, յեթե պաշտպան չկա, վերջին ճառերից հետո նախադասը հայտարարում է կողմերի վիճարանութունն ավարտված է, և դատարանն անցնում է պրոցեսի հաջորդ ստադիային՝ մեղադրյալի վերջին խոսքը լսելուն:

4. ՄԵԴԱԴՐՅԱԼԻ ՎԵՐՋԻՆ ԽՈՍՒՐ  
(Ռեֆեռ. Գր. Գատ. Որ. 309 հոդ.)

Կողմերի վիճարանութունը վերջանալուց հետո նախադասը վերջին խոսքը տալիս է մեղադրյալին: Այդ վերջին խոսքը մեղադրյալին տրվում է նաև այն դեպքում, յեթե պաշտպան չունենալով նա ինքն է պաշտպանության ճառ արտասանել: Վերջին խոսքում մեղադրյալի ժամանակը չի

կարելի սահմանափակել. նա կարող է խոսել այնքան, վորքան անհրաժեշտ է համարում: Այստեղից, սակայն, չի կարելի այն հետևութունն անել, վոր մեղադրյալին չի կարելի կանգնեցնել, յեթե նա թույլ է տալիս իրեն հակահեղափոխական ճառեր արտասանել կամ այնպիսի արտահայտություններ և գործածում, վորոնք վիրավորում են դատարանին կամ այլ պաշտոնատար կամ մասնավոր անձանց: Վերջին խոսքի ժամանակ մեղադրյալին վորևէ հարցեր չեն առաջարկում, թեկուզ և նա շոշափելիս լինի այնպիսի հանգամանքներ, վորոնք առաջին անգամ են միայն հայտնի դարձել դատարանին: Այս դեպքում, վերջին խոսքից հետո դատարանն իրավունք ունի վերսկսել դատաքննութունն ու ինչպես մեղադրյալին, նույնպես և վկաներին հարցաքննելու միջոցով պարզել այն հանգամանքը, վորի մասին իր վերջին խոսքում հայտնել է մեղադրյալը:

Դատաքննության վերսկսումը կայանում է հետևյալում: Դատարանը վորոշում է կայացնում, վորի մեջ պատճառաբանում և դատաքննութունը վերսկսելու անհրաժեշտութունը: Այդ վորոշումը հրապարակելուց հետո դատարանը պարզում է այն հանգամանքը, վորը քննութունը վերսկսելը անհրաժեշտ է դարձրել: Կողմերը կարող են հարցեր տալ, մասնակցել նոր հանգամանքը պարզելուն, կարող են իրենց ցուցմունքները տալ հետազոտվող փաստի այս կամ իրենց ցուցմունքները, վորոնք գործով նոր էլին, դատարանը նորից հայտարարում է քննութունն ավարտված, նորից բացում է կողմերի վիճարանութուն և մեղադրյալին մեկ անգամ ևս վերջին խոսք է տալիս:

Մեղադրյալի վերջին խոսքից հետո նախադասը հայտարարում է, վոր դատարանը հեռանում է խորհրդակցական սենյակ դատավճիտ կայացնելու համար, իսկ նիստն ընդհատվում է:

Քանի վոր սովորաբար մեղադրյալը, տուժողը, մեկի և մյուսի ազգականներն սպասում են դատավճիտ հայտարարմանը և քանի վոր անհրաժեշտ է, վորպեսզի դատավճիտը հայտարարելուց հետո ներկա լինեն դատախաղն ու պաշտպանը, պետք է անհրաժեշտ համարել, վորպեսզի դատարանը

նը հեռանալով խորհրդակցական սենյակը՝ հայտարարի, թե, որինակ, վորքան ժամանակից հետո կհրատարակվի դատավճիռը:

Իրանով դատաքննությունն ընդհատվում է և վերսկզբում այն ժամանակ, յերբ դատավճիռ կայացնող դատարանը վերադառնում է դահլիճ այն հրատարակելու համար:

5. ԳԱՏԱՎՃՈՒ ԶՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ  
(ՌեֆՅԱԶ Բր. Դատ. Որ. 339—340 հոդ. հոդ.)

Դատավճռի հրատարակումը հանդիսանում է վերջին, յեզրափակիչ գործողությունը, վորով վերջանում է զրեական գործի դատաքննությունը:

Իսկ պրոցեսի պատասխանատու մոմենտն է, ուստի և պետք է բավականին հանդիսավոր և գործնական բնույթ ունենա:

Դատական նիստում բոլոր ներկա գտնվողները, ներառյալ և դատարանի կազմը, դատավճիռը լսում են հոտընկայս: Նախագահը կարգում է դատավճիռը պարզորոշ, հըստակ, բարձր ձայնով, այնպես, վոր յուրաքանչյուր բառը հասնի ներկա գտնվողներին: Յեթե գործը ընկել է դարձփակ նիստում, այս դեպքում ել դատավճիռը հայտարարվում է հրատարակորեն: Հրատարակելով դատավճիռը, նախագահը պետք է իր խոսքերով շարադրի մեղադրյալին դատավճռի յեզրափակման մասը, ընդվորում, արդարացված մեղադրյալները, յեթե նրանք կալանքի տակ են գըտնըվում, անվիջապես ազատվում են ու թողնում մեղադրյալներին աթոր: Դատապարտվածներին նախագահը պարզաբանում է դատավճռի դանդատարկման նրանց իրավունքը, դանդատարկման ժամկետն ու կարգը:

Յեթե մեղադրյալների վերաբերմամբ, վորոնք կալանքի տակ չեն, ընդունված է վորպես խափանման միջոց՝ կալանավորում, ապա այդ միջոցը կիրառվում է տեղնուտեղը և անմիջապես:

Իրանով դատաքննությունը՝ տվյալ գործով համարվում է ավարտված և նախագահը հայտարարում է նիստը փակված:

ԳԱՏԱՎԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

(ՌեֆՅԱԶ Բր. Դատ. Որ. 77—81, 399 հոդ. հոդ.)

1. ԳԱՏԱՎԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Քրեական գործերով յուրաքանչյուր դատավճիռ, բացառությամբ այն դատավճիռների, վոր կայացնում են միութենական հանրապետության և ՌՍՀ Միության Գերագույն դատարանը, կարող է դանդատարկվել մեղադրյալի ու բողոքարկվել դատախազի կողմից: Վորպեսզի յերկրորդ ատյանը, վորը քննելու յե դանդատը կամ բողոքը, կարողանա ստուգել դանդատի և բողոքի ճշտությունը և լուծել դանդատարկվող դատավճիռը բեկանելու կամ ուժի մեջ թողնելու հարցը, այդ ատյանը պետք է իր տրամադրության տակ ունենա վոչ միայն դատարանի դատավճիռը, այլ և այնպիսի փաստաթուղթ, վորն իրենից լրիվ հաշվետվություն ներկայացներ այն ամենի մասին, ինչ տեղի յե ունեցել դատական նիստում: Այդպիսի փաստաթուղթ՝ հանդիսանում է դատական նիստի արձանագրությունը:

Արձանագրությունն ունի բացառիկ կարևոր նշանակություն, քանի վոր նա նկարագրում և վավերացնում է այն բոլոր փաստերն ու հանգամանքները, վորոնք տեղի յեն ունեցել դատական նիստում: Գոյություն ունի հաստատ կանոն, վորի համաձայն դատական նիստում տեղի ունեցած փաստ է համարվում այն, վոր վավերացված է դատական նիստի արձանագրության մեջ: Յեթե, որինակ, արձանագրության մեջ չի հիշատակված, վոր մեղադրյալին վերջին խոսք է տրված, թեկուզ և իրականում մեղադրյալին վերջին խոսք տրված լինի, այնուամենայնիվ յերկրորդ ատյանը հաշի կտանի միմիայն արձանագրությունը և նախագահի գործողությունների մեջ կտանի մեղադրյալի իրավունքների կոպիտ խախտում: Վկաների դատական նիստում տրված ցուցմունքների մասին յերկրորդ ատյանը կարող է իմանալ արձանագրությունից միայն, վորը հանդիսանում է այն միակ աղբյուրը, վորով հնարավոր է ծանոթանալ այդ ցուցմունքներին:

Համաժողովն Երևանի քաղաքացիական իրավաբանական ֆակուլտետի անդամները և Երևանի քաղաքացիական իրավաբանական ֆակուլտետի անդամները և Երևանի քաղաքացիական իրավաբանական ֆակուլտետի անդամները և Երևանի քաղաքացիական իրավաբանական ֆակուլտետի անդամները:

Մի կողմից, դատական նիստի արձանագրությունը պետք է լրիվ ու կատարյալ հաշվետվություն լինի այն մասին, թե ինչ է տեղի ունեցել դատական նիստում: Վերջինս ավելի լրիվ լինի արձանագրությունը, քանի ավելի ճիշտ արտացոլվի դատական նիստի ընթացքը, կողմերի և դատարանի գործողությունները, այնքան էլ ավելի ճշտ կլինի յերկրորդ ատյանի համար ավելի ճիշտ վերաբերվել դատներին ու բողոքներին:

Որենքը բացառիկ կարևոր նշանակություն է տալիս դատական նիստի արձանագրությանը և նույնիսկ կանոն է սահմանում, վորի համաձայն դատական նիստի քարտուղարը յենթակա յե բացարկման, յեթե կողմերը հիմք ունեն կարծելու, վոր քարտուղարի շահագրգռվածությունը գործի վախճանում կխանդարի նրան ճշտորեն ու անաչառ կերպով շարադրելու արձանագրության մեջ դատական նիստի ընթացքն ու դատական նիստում տեղի ունեցած գործողությունները: Ուստի դատական նիստի արձանագրությունը ճշտորեն վարելու գործին դատարանը հատուկ ուշադրություն պետք է նվիրի: Պետք է հիշել, վոր ճիշտ դատավճիռը կարող է բեկանվել, յեթե դատական նիստի արձանագրությունն ունի եյական թերություններ և բացեր:

2. ԻՆՁ ՊԵՏԲ Ե ՊԱՐՈՒՆԱԿԻ ԻՐ ՄԵՋ ԴԱՍԱԿՈՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Այս հարցի պատասխանը մենք գտնում ենք Քաղ. Դատ. Որենսդրում և ՌԻՃՍՆ ու ԽՍՀՄ Դերագույն դատարանի մի շարք վորոշումներում: Այս ցուցումները հիմնականում հետևյալներն են:

Սովորաբար ընդունված է դատական նիստի արձանագրությունները գրել վաղորոք պատրաստված տղադիր բլանկների վրա: Դա սխալ է, և այդ պրակտիկային պետք է վերջ տալ: Պատճառը հասկանալի յե: Այդպիսի բլանկներում արդեն վաղորոք ցույց են տրված (սովորաբար տպագրական յեղանակով) այն գործողությունները, վոր դա-

տարանը պարտավոր է կատարել: Որինակ, դատարանի կազմի հրապարակումը, մեղադրյալին նրա իրավունքները պարզաբանելը և այլն: Իրականում այդ գործողություններն արդյոք տեղի յեն ունեցել, թե վոչ, արձանագրության մեջ գրանք արդեն գրված են. յերկրորդ ատյանը հնարավորություն չունի ստուգելու այդ նշումների ճշտությունը:

Այս տեսակետից խիստ դժվարին գրություն է ստեղծվում մեղադրյալի համար, վորին, որինակ, գրել է են նրա վորեև իրավունքներից. յեթե նա գանդատվի այդ առթիվ, ապա նրա դեմ կվկայի արձանագրությունը, մինչդեռ այդ արձանագրությունը չի արտացոլում իրերի փաստական գրությունը, քանի վոր նշումներն արձանագրության մեջ արված են մինչև դատական նիստի բացումը: Հետևապես, դատական նիստի արձանագրությունն սկզբից մինչև վերջը պետք է կազմված լինի անմիջապես քաղաքացիական նիստում: Քարտուղարը պարտավոր է մաքուր թղթի վրա սկսել արձանագրությունն ու գրել բացառապես այն, յինչ վոր տեղի յե ունեցել ավյալ դատական նիստում:

Դատական նիստի յուրաքանչյուր արձանագրության անհրաժեշտ մասերը հանդիսանում են հետևյալ նշումները նրա մեջ՝

1) Այն վայրը (քաղաքի, գյուղի անունը), վորտեղ գործն է քննվում, քննության սկզբի և ավարտման ժամանակը (տարի, ամիս, ամսաթիվ). դատարանի կազմը (նախագահողի և ժողովրդական ատենակալների ազգանունները). քարտուղարի, մեղադրողի, պաշտպանի, քաղաքացիական հայցվորի ազգանունները: Յեթե գործով մասնակցում են միջանի պաշտպաններ, արձանագրության մեջ պետք է ցույց տալ, թե պաշտպաններից յուրաքանչյուրը վոր մեղադրյալին է պաշտպանում:

2) Ճիշտ մատնանշում այն մասին, թե գործին մասնակցողներից ովքեր են դատական նիստի կանչվել, կանչվածներից ով է ներկայացել, ով բացակայում է և յինչ պատճառներով, վորչափով վոր այդ պատճառները հայտնի յեն դատարանին, մեջ բերելով այն փաստաթղթերը, վորոնք բացատրում են այդ պատճառները:

3) Տեղեկություններ մեղադրյալի մասին, այն է՝ թե

արդյոք դատական նիստի բացման պահին նա ազատ է յեղել թե կալանադրված է դատարան բերվել: Յեթե մեղադրյալը կալանքի տակ է գտնվում, անպայման պետք է ցույց տալ նախնական կալանքի ժամկետը:

4) Կողմերի միջնորդութունների և դատարանի այդ առթիվ կայացրած վորոշումների մանրամասն նշումը:

5) Նախագահի պարզաբանումները մեղադրյալին այն մասին, վոր նա իրավունք ունի յուրաքանչյուր դատական գործողութունից հետո բացատրութուններ տալու, բացարկներ հայտնելու և վկաներին ու փորձագետներին հարցեր առաջարկելու, ինչպես նաև դատավճիռը դանդաղորդելու և դանդաղատարկման ժամկետները:

6) Մեղադրյալներին, վկաներին ցուցմունքներն ու փորձագետներին պատասխանները, ընդվորում, այդ ցուցմունքներն անհրաժեշտ է շարադրել ամենամանրամասն կերպով և այնպես, վորպեսզի այդ նշումներն արձանագրության մեջ իսկապես արտացոլեն դատաքննության ժամանակ տված նրանց ցուցմունքները: Ցուցմունքների նշումն արձանագրության ելակն մասերից մեկն է հանդիսանում, և արձանագրություն կազմող քարտուղարը հատուկ ուշադրություն պետք է դարձնի դրանց վրա: Այստեղ պահանջվում է մանրագին ճշտություն և յուրաքանչյուր գրանցվող բառի յուրջ կշռադատութուն: Յերբմն, որինակ, պատահում է այսպես՝ մեղադրյալը նախագահի հարցին, թե արդյոք նա իրեն հանցավոր ճանաչում է, տալիս է դրական պատասխան, քարտուղարն այդ մտցնում է արձանագրության մեջ. մինչդեռ նրա հետագա բացատրութուններից պարզվում է, վոր նա իրեն հանցավոր է ճանաչում վոչ թե այն բանի համար, ինչում նրան մեղադրում են: Նա մեղադրվում է վատնման մեջ, իսկ իրեն հանցավոր է ճանաչում անփութության մեջ: Պարզ է, վոր «մեղադրյալն իրեն հանցավոր ճանաչեց» նշումն արձանագրության մեջ տվյալ պայմաններում միանգամայն սխալ է, չի համապատասխանում մեղադրյալի ասածին: Այս որինակից յերևում է, թե ինչ խոշոր նշանակություն ունի վոչ միայն մեղադրյալի, այլև գործով հարցաքննվող բոլոր անձանց ցուցմունքների ճիշտ արձանագրումը: Ցուցմունքները ճիշտ են

նշվում այն ժամանակ, յերբ քարտուղարը, ուշադրությամբ մտասուզվելով ցուցմունքի մեջ և ըմբռնելով նրա իմաստը, արձանագրում է այն: Հակառակ դեպքում նշումը լինում է աղտոտ—քարտուղարը բռնում է հարցաքննվողի առանձին բառերը և չհասկանալով դրանց բովանդակութունը, մըացընում է արձանագրության մեջ առանց կապակցելու նույն հարցաքննվողի այլ բացատրութունների հետ:

7) Մանրամասն շարադրումը քաղաքացիական հայցվորի պահանջների, այն է՝ պետք է նշել, թե մեղադրյալներից վորի դեմ է քաղաքացիական հայցը հարուցված և ինչպիսի գումարով: Յեթե հայցվորը չի կարողացել ցույց տալ դումարը, ապա և այդ հանգամանքը պետք է նշել արձանագրության մեջ:

8) Կողմերի վիճարանության ելության շարադրումը: Ճառերի ամբողջ բովանդակութունը չպետք է շարադրել, բայց անպայման պետք է նշել արձանագրության մեջ այն վերջնական յեզրակացութունները, վորոնց հանդեպ են կողմերը (դատապարտում, արդարացում, պատժամիջոց, քաղաքացիական հայցի չափ): Յեթե կողմերը միջնորդում են մյուս կողմի ճառից քաղվածքներ արձանագրության մեջ մտցնելու մասին—այդ միջնորդութունը պետք է բավարարել:

9) Դատարանի կողմից դատական նիստի ընթացքում կայացրած վորոշումների նշումը: Անկախ այն բանից, թե վորոշումները վորտեղ են կայացվում՝ խորհրդակցական սենյակում, թե դատական նիստում, դրանք պետք է շարադրվեն արձանագրության մեջ: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն վորոշումներին, վորոնք կայացվում են դատարանի կողմից դատական նիստում, բանավոր կերպով: Դրանք պետք է արձանագրվեն ըստ հնարավորության բառացիորեն, վորպեսզի պարզ պատկերացում տրվի դատարանի կայացրած վորոշման ելության մասին:

Բացի այս ելեմենտներից, պետք է արձանագրության մեջ մտցնել այն ամենը, ինչի մասին միջնորդում են կողմերը: Բոլոր նշումները դատարանի գործողութունների մասին պետք է հետևեն այն կարգով, ինչ կարգով տեղի յեն ունեցել դատական նիստում, քանի վոր միմիայն այս

դեպքում արձանագրութիւնը կարող է լրիվ ու ճիշտ հաշ-  
վետաբանութիւնը լինել այն ամենի, ինչ իրոք տեղի յի ունե-  
ցել դատական նիստում, այսինքն, այն փաստաթուղթը,  
փորը հնարավորութիւն կտա յերկրորդ ատյանի դատարա-  
նին ճշտորեն լուծել այն հարցը, թե արդո՞ք յենթակա  
յի դատաւճիւրը բեկանման, թե պետք է թողնել իր ուժի  
մեջ:

3. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԸ

Արձանագրութիւնը վերաբերող մի այլ, վոչ պակաս  
էյական հարց է հանդիսանում նրա կազմելու ժամկետը:  
Գործող Քաղ. Դատ. Որ. էյական թերութիւնը կայանում  
է արձանագրութիւն կազմելու ճիշտ սահմանված ժամկետի  
բացակայութիւն մեջ: Այստեղից էլ բղխում է այն սխալ  
պրակտիկան, վոր կիրառում են միջանի դատարաններ:  
Հաճախ անցնում է հինգ-վեց, յերբեմն էլ ավելի օրեր,  
մինչև արձանագրութիւնը ձևակերպվում ու ստորագրվում  
է նախագահի կողմից: Պետք է վորպես անխախտ կանոն  
ընդունել, վոր դատական նիստի արձանագրութիւնը պետք  
է պատրաստ լինի գործի քննութիւնն ավարտվելուց անմի-  
ջապէս հետո և ամփոջապէս էլ ստորագրված նախագահի  
կողմից:

4. ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Արձանագրութիւնը կազմելուց և ստորագրելուց յերեք  
օրվա ընթացքում դատական նիստին մասնակցող կողմերը  
կարող են տալ իրենց դիտողութիւններն արձանագրութիւն  
առթիւ, մատնացույց անելով նրա անճշտութիւնն ու թերի  
լինելը:

Դիտողութիւններն արձանագրութիւն առթիւ քննում է  
այն դատաւորը, վորը նախագահել է գործով: Յետե դա-  
տաւորը ճիշտ է գտնում դիտողութիւնները, նա իր համա-  
ձայնութիւնը վավերացնում է ստորագրութիւնով: Չհամա-  
ձայնելու դեպքում դիտողութիւնների ճշտութիւնը հարցը  
տեղափոխվում է դատարանի նախապատրաստական (տնօ-  
րինական) նիստի քննութիւն, վորին անպայման մասնակ-  
ցում է դատական նիստի նախագահը և ըստ հնարավորու-

թիւն՝ գործի քննութիւնը մասնակցող ատենակալներից  
մեկը: Ինչպիսի էլ լինեն կողմերի ներկայացրած դիտողու-  
թիւնների առթիւ դատարանի կայացրած վորոշումները,  
այնուամենայնիւ այդ դիտողութիւններն անպայման կցվում  
են գործին:

Նման վերաբերմունքը դեպի այդ դիտողութիւններն  
ապահովում է դրանց մանրագնին կազմելն ու բարձրաց-  
նում արձանագրութիւն՝ վորպէս դատական նիստի կարե-  
վորագույն փաստաթղթերից մեկի նշանակութիւնը:



Հավելված

Համեմատական աղյուսակ

Մեթոդիկական ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՐԵԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԵՆՍԳՐՔԵՐԻ ՀՈԳՎԱԾՆԵՐԻ  
ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՄԱՍԻՆ

ՌեզՅՍՀ	Ուկրա- ին. հՅՀ	Բելո- ուսու. հՅՀ	Վրաց. հՅՀ	Ադրբեյ- հՅՀ	Ուզբեկ. հՅՀ	Հայկակ. հՅՀ	Տաջիկ. հՅՀ
19	20	19	19	19	99	19	13
41—49	38—47	41—49	40—48	38—46	83—85	41—49	75
55	53	55	54	52	88	55	76
77—81	75—79	77—81	77—81	77—81	20, 101, 102	77—80	79—80
233—246	232—234	233—240	233—235	244—249	91—98	216—225	68—73
251	—	251	238	—	251	228	—
262—278	243—258	262—278	262—278	259—275	105—113	239—255	85—86
279—301	259—263	279—301	279—301	276—298	113—118	256—278	88—89, 92—93
302—310	280—288	302—310	302—310	299—308	120, 123—126	279—288	94, 97—100
314	292	314	314	311	121	292	—
319	216	319	319	316	128	297	—
339	312	339	339	336	—	317	—
399	—	399	399	—	—	366	—

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՂ

ԴԼՈՒԽ I. ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՑԵՎ ՊՐՈՑԵՍՈՒԱԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ . . . . . 3

ԴԼՈՒԽ II. ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ, ՎՈՐՈՆՅՈՎ ԿԱՌՈՒՅՎՈՒՄ Ե ԴՄՏՑԱԿԱՆ ՆԻՍՏԸ . . . . . 8

1. Հրապարակախուսություն . . . . . 8

2. Բանավորություն ու անմիջականությունը . . . . . 11

3. Պրոցեսի անընդհատությունը . . . . . 12

4. Մրցողականությունն ու կողմերի իրավահավասարությունը . . . . . 14

5. Մեղադրյալին պաշտպանության իրավունք ավազովելը . . . . . 16

6. Մեղադրյալին դատարանում յեկույթ ունենալու և դործի նյութերին իր մայրենի լեզվով ծանոթանալու իրավունքն ավազովելը . . . . . 20

ԴԼՈՒԽ III. ԱՅՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՎՈՐՈՒՔ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՆ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՎԱՐՈՒՄԸ . . . . . 21

1. Գործը զննության նշանակելը . . . . . 22

2. Մեղադրական յեղրակացություն պատճենը մեղադրյալին հանձնելը . . . . . 22

3. Կողմերի միջնորդությունների լուծումը . . . . . 23

4. Պաշտպան նշանակելը . . . . . 24

5. Կարգադրություն կողմերին, նրանց ներկայացուցիչներին, վկաներին և վորձագետներին դատակոչելու մասին . . . . . 25

ԴԼՈՒԽ IV. ԳՈՐԾԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՍՏԱԿԱՆԵՐԸ . . . . . 27

1. Նախապատրաստական ստադիան . . . . . 28

2. Դատաքննություն . . . . . 37

3. Կողմերի վիճարանությունը . . . . . 54

4. Մեղադրյալի վերջին խոսքը . . . . . 58

5. Դատավճռի հրապարակումը . . . . . 60

ԴԼՈՒԽ V. ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ . . . . . 61

1. Դատական նիստի արձանագրության նշանակությունը . . . . . 61

2. Ինչ պետք է պարունակի իր մեջ դատական նիստի արձանագրությունը . . . . . 62

3. Արձանագրություն կազմելու ժամկետը . . . . . 66

4. Դիտորդություններ արձանագրության առթիվ . . . . . 66

Հավելված . . . . . 68

Թարգմ. Լ. Միրզա-Ավագյան  
Խմբագրեցին Ս. Մամյան և Ս. Մարտիրոսյան  
Սրբագրեիչ Հ. Դպրութանյան  
Կոնսրոլ սրբագրեիչ Լ. Արսվյան

---

Գլավիճի լիազոր Վ. 1091 պատվեր № 269 տիրած 1000  
Հանձնված և արտադրության 11/Մ 1939 թ.  
Ստորագրվել և սպագրելու 15/Մ 1940 թ.  
Դինը 1 ս. 50 կ.

---

Բաղաբահան գրահանության պետական հրատարակչության տպարան  
Յե բեան, Սլլահվերդյան № 65.

« Ազգային գրադարան



NL0215132

ГРИБОК 1 П. 50 4.

36. 718

Б. Я. АРСЕНЬЕВ  
СУДЕБНОЕ ЗАСЕДАНИЕ  
ПО УГОЛОВНЫМ ДЕЛАМ

Издательство Наркомюста Арм. ССР  
Ереван ● 1940